



AGORA
CENTRAL EUROPE

B4C Budgets
for
Citizens
Բյուջեներ քաղաքացիների համար



ԱՄՓՈՓ ԶԵԿՈՒՅՑ

ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Ոլորտի իրավական կարգավորման առանձնահատկությունները մինչև նոր
օրենքի ընդունումը և դրանից հետո*

«Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» ՀԿ

Երևան 2026թ.

Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Բյուջեներ քաղաքացիների համար» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հետբուհական կրթությունը բյուջեի լեզվով» ֆինանսական թափանցիկություն և հաշվետվողականություն» ծրագրի շրջանակներում: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները: Հեղինակներ՝ Ալեքսանդր Շագաֆյան, Լիլիա Խաչատրյան, Աննա Բադալյան

Բովանդակություն

Ներածություն	5
Ոլորտի իրավակարգավորումները մինչ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի ընդունումը	7
Ներկա իրավիճակը. նոր օրենքն ու ոլորտի կառավարումը	12
ՀՀ կրթության պետական բյուջեի 2020-2025թթ.	41
ամփոփ տվյալներ	41
Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի միջոցառումներ 2025թ. (9 ամիս)	49
Միջոցառումների վերլուծություն	53

Օգտագործված հապավումներ

ԱԺ- Ազգային ժողով

ԲՏՃՄ- Բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մեթեմատիկական

ԵՄ- Եվրոպական միություն

ԿԳՄՍՆ- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

ՀՆԱ- Համախառն ներքին արդյունք

մլն.- միլիոն

մլրդ.- միլիարդ

ՏՀԶԿ- Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն

PhD- Philosophy Doctor (Փիլիսոփայության/գիտության դոկտոր)

Dr. habil- Doctor of Habilitation (Հաբիլիտացիոն դոկտոր)

Ներածություն

20-րդ դարի վերջը և 21-րդ դարի սկիզբը մարդկության հասարակական, սոցիալական և տնտեսական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում նշանակալի վերափոխումների ժամանակաշրջան է: Կրթությունը, այդ թվում՝ բարձրագույն կրթությունը, այդ ազդեցություններից զերծ մնալ չէր կարող: Ավելին, կրթության բնագավառում հենց բարձրագույն կրթությունն է, որ այս ժամանակահատվածում, թերևս առավել էական վերափոխումներ է ապրել: Ըստ ամերիկացի սոցիոլոգ Մարտին Թրոտի այդ գործընթացն առաջնահերթ նշանավորվել է էլիտաների կրթությունից անցում կատարելով դեպի մասսայական, ապա՝ համընդհանուր կրթության¹: Ոլորտի «մասսայականացման տրամաբանությունը» թերևս անխուսափելի է՝ հանգեցնելով, ի թիվս այլի, ակադեմիական չափանիշների պահանջների նվազեցման, ֆինանսավորման նոր մոդելների անհրաժեշտության²:

Հայաստանի Հանրապետությունում կրթության բնագավառը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, «Կրթության մասին» ՀՀ օրենքով, ոլորտային օրենքներով և համապատասխան այլ իրավական ակտերով:

Մինչ 2025 թվականի սեպտեմբերի 11-ը՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ նոր օրենք) ընդունումը, Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթության և գիտության ոլորտները կարգավորվում էին ոլորտային հետևյալ օրենքներով՝ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Գիտության և գիտատեխնիկական գործունեության մասին» և «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքներով, դրանցից բխող ենթաօրենսդրական այլ իրավական ակտերով: Նոր օրենքի ընդունմամբ նախկինում գործառնության մեջ եղած երեք օրենքներն ուժը կորցրած են ճանաչվում, բացառությամբ նոր օրենքի անցումային և եզրափակիչ դրույթներով սահմանված կարգավորումների: Նոր օրենքը, ըստ էության, «երեքը մեկում» մոտեցում է՝ ՀՀ-ում բարձրագույն կրթության և գիտության ոլորտների իրավական կարգավորման տեսանկյունից:

Սույն զեկույցը բաղկացած է բովանդակային երեք հիմնական մասից՝ Ոլորտի իրավակարգավորումների վերլուծություն մինչև «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի ընդունումը, Առկա իրավիճակը նոր օրենքի ընդունումից հետո, ինչպես նաև Բացահայտված խնդիրներ ու դրանց կարգավորման ուղղությամբ առաջարկություններ: Զեկույցը պարունակում է նաև

¹Martin Trow, "Twentieth- Century Higher Education: Elite to Mass to Universal", Johns Hopkins University Press, 2010

²Altbach, Reisberg & Rumbley, " Trends in Global Higher Education: Tracking an Academic Revolution", UNESCO 2009 World Conference on Higher Education

հավելված՝ Բարձրագույն և հետբուհական կրթության 2020-2025թթ. բյուջեի վերլուծություն:

Չնայած այն հանգամանքին, որ սույն զեկույցի առաջնային թիրախը հետբուհական կրթությունն է, վերջինս բարձրագույն կրթությունից ամբողջովին առանձին դիտարկելը հնարավոր չէ թե՛ իրավական, և թե՛ տեխնիկական իմաստով: Դա է պատճառը, որ զեկույցում հանդիպում են դրույթներ ու տվյալներ, որոնք առաջին հայացքից վերաբերելի են միայն բարձրագույն կրթությանը: Նաև այդ պատճառով, ապա հնարավոր տարընկալումներից, հին ու նոր օրենքների հասկացությունների միջև տարընթերցումներից խուսափելու, ինչպես նաև հետաքրքրված անձանց համար սույն զեկույցի բովանդակությունն ավելի մատչելի դարձնելու տեսանկյունից, նպատակահարմար ենք համարել զեկույցի համապատասխան բաժիններում կիրառել տվյալ ժամանակահատվածում և համատեքստում արդիական, գործածության մեջ եղած հասկացությունները: Այսպիսով, զեկույցի առաջին և երրորդ բաժիններում, ի թիվս այլ հասկացությունների՝ օգտագործված են հետբուհական կրթություն, ասպիրանտ, ասպիրանտուրա, հայցորդ և այլ հասկացություններ: Մինչդեռ նոր օրենքում հետբուհական կրթություն հասկացություն առկա չէ, փոխարենը օգտագործվում է բարձրագույն կրթության երրորդ մակարդակ հասկացությունը: Նոր օրենքով՝ բուհական կրթության երրորդ մակարդակի կրթության կազմակերպման համար պատասխանատու են դոկտորական դպրոցները³, վերջինս լրիվ նոր հասկացություն է: Եվ քանի որ ասպիրանտուրա/ասպիրանտ հասկացություններ այլևս առկա չեն կամ ավելի ճիշտ է ասել՝ գործածությունից դուրս են գալիս, բարձրագույն կրթության բոլոր երեք մակարդակներում սովորողները համարվում են ուսանող⁴: Նոր օրենքից բացակայում է նաև հայցորդությունը որպես գիտական աստիճանի հայցման ձև, հայցորդության ինստիտուտը դադարում է գործել:

Ձեկույցի երրորդ բաժնում ամփոփված են ուսումնասիրության ընթացքում իրականացված հարցման և փորձագիտական հարցազրույցների արդյունքները: Հարցումն իրականացվել է գործող ասպիրանտների և հայցորդների շրջանում: Քանի որ նոր օրենքով այս կարգավիճակները (օրենքի ընդունումից առաջ և այդ պահին) շարունակում են համապատասխան պայմաններում և ժամանակահատվածում (կարգավորված է նոր օրենքի անցումային և եզրափակիչ դրույթներով) իրավագոր լինել, ինչպես հարցման ընթացքում, այնպես էլ դրա արդյունքներն ամփոփելիս օգտագործվել են դեռևս գործածության մեջ գտնվող հասկացություններն ու կատեգորիաները: Ձեկույցի երրորդ բաժինն ամփոփվում է ուսումնասիրության արդյունքում բացահայտված խնդիրներով և դրանց բարելավման ուղղությամբ առաջարկներով:

³ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 11-րդ մաս

⁴ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ

Ոլորտի իրավակարգավորումները մինչ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի ընդունումը

Մինչ նոր օրենքի ընդունումը, հետբուհական կրթությունն կարգավորվում էր «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով: Միաժամանակ Հայաստանի Հանրապետությունն այն երկրներից է, որի կրթության օրենսդրության մաս է կազմում կրթության զարգացման պետական ծրագիրը, որն ընդունվում է ՀՀ Ազգային ժողովի կողմից և ունի օրենքի կարգավիճակ: Ներկայումս գործող «Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիր» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Զարգացման պետական ծրագիր) ընդունվել է 2022 թվականին՝ նպատակ ունենալով սահմանել կրթության բնագավառի և դրա համապատասխան ոլորտների մինչև 2030 թվականի զարգացման տեսլականը, դրան հասնելու ձևերն ու միջոցները, ինչպես նաև՝ արդյունքի ցուցիչները: ՀՀ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտների իրավական կարգավորումների մաս են կազմում նաև որոշ ենթաօրենսդրական ակտեր, մասնավորապես կառավարության որոշումներ, որոնցով կարգավորվել են ասպիրանտուրայի ընդունելության, ստացիոնար և հեռակա անվճար ասպիրանտական տեղերի հատկացումների, գիտական աստիճանների և կոչումների շնորհման կարգերը և այլն:

Կրթության և գիտության ոլորտներում պետության հանձնառությունը, ինչպես նաև կրթության իրավունքի ճանաչումը ամրագրված են ՀՀ Սահմանադրության առաջին և երկրորդ գլուխներում: Սահմանադրության 1-ին գլխի 15-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է. «Պետությունը խթանում է կրթության և գիտության զարգացումը»: Կրթություն իրավունքն ամրագրված է Սահմանադրության 38-րդ հոդվածում: Վերջինիս 2-րդ և 3-րդ մասերը անդրադառնում են մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և մասնագիտական կրթություն ստանալու իրավունքին, ինչպես նաև՝ բուհերի՝ օրենքով սահմանված շրջանակներում ինքնակառավարման, ակադեմիական և հետազոտական ազատությանը: Բարձրագույն և մասնագիտական կրթությանն անդրադարձ կա նաև Սահմանադրության երրորդ գլխի 86-րդ հոդվածում՝ Պետության քաղաքականության հիմնական նպատակներում, ըստ որի տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակն է նաև անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացումը, ինչպես նաև հիմնարար և կիրառական գիտության զարգացումը:

Կրթության բնագավառի մայր օրենքը՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 1999թ-ին: Օրենքը սահմանում է կրթության բնագավառում պետական

քաղաքականության սկզբունքները և կրթության համակարգի կազմակերպական-իրավական ու ֆինանսատնտեսական հիմքերը⁵: ՀՀ-ում բարձրագույն կրթության ծրագիրը մասնագիտական հիմնական կրթական ծրագրերից է: Մինչ նոր օրենքի ընդունումը, սրա մաս էր նաև հետբուհական կրթության ծրագիրը⁶:

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը՝ Բարձրագույն կրթությունը, սահմանում է բարձրագույն կրթության նպատակը, մինչ նոր օրենքի ընդունումը՝ բուհերի տարատեսակները, բարձրագույն մասնագիտական կրթության որակավորումների աստիճանները և այլն: Ըստ այդմ՝ բարձրագույն մասնագիտական կրթության նպատակն է բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստումն ու վերաորակավորումը, միջնակարգ ընդհանուր և միջին մասնագիտական կրթության հիմքի վրա անձի՝ կրթության զարգացման պահանջմունքների բավարարումը և այլն: Օրենքը սահմանում էր բարձրագույն ուսումնական հաստատության տեսակները՝ համալսարան, ինստիտուտ, ակադեմիա և կոնսերվատորիա: Սահմանված կարգով համապատասխան կրթական ծրագրեր, այդ թվում՝ բարձրագույն և հետբուհական, կարող էին իրականացվել նաև այլ տիպի կազմակերպություններում: Այդօրինակ կազմակերպություններից է Գիտության ազգային ակադեմիան նրա համակարգում գործող գիտական/ուսումնական կազմակերպությունները և/կամ ստորաբաժանումները: Բարձրագույն մասնագիտական կրթության որակավորումներն են բակալավրը, դիպլոմավորված մասնագետը, մագիստրոսը: Օրենքի 25-րդ հոդվածը կարգավորում էր հետբուհական մասնագիտական կրթության հետ կապված հարցերը: Ըստ այդմ՝ հետբուհական մասնագիտական կրթության նպատակը բարձրագույն մասնագիտական կրթությամբ անձանց կրթական մակարդակի և գիտամանկավարժական որակավորման բարձրացումն է: Սույն հոդվածով նաև սահմանվում էր, որ հետբուհական մասնագիտական կրթությունն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ասպիրանտուրայում, ինտերնատուրայում, օրդինատուրայում՝ հետազոտողի, կլինիկական օրդինատորի կրթական ծրագրերով: Հետազոտողի կրթական որակավորման աստիճան կարող էին ստանալ ասպիրանտական (հայցորդական) կրթական ծրագիր անցած և համապատասխան պետական ամփոփիչ ատեստավորում անցած անձինք: Բժշկական մասնագիտությունների գծով օրդինատորի բարձրագույն մասնագիտական որակավորում կարող են ստանալ 1-ից 5 տարվա հետբուհական մասնագիտական ծրագրի ամփոփիչ ստուգումը անցած անձինք: Օրենքի 25-րդ հոդվածը որը կորցրած է ճանաչվել նոր օրենքի ընդունմամբ:

Բարձրագույն և հետբուհական կրթությունն անմիջականորեն և առավել մանրամասն կարգավորվում էր «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական

⁵ «Կրթության մասին» ՀՀ օրենք, 1-ին հոդված

⁶ «Կրթության մասին» ՀՀ օրենք, 10-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 4-րդ կետեր

կրթության մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել էր 2004 թվականին: Ըստ այդ օրենքի, հետբուհական կրթությունը՝ բարձրագույն մասնագիտական կրթության (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) հենքի վրա ասպիրանտի, հետազոտողի, հայցորդի ծրագրով իրականացվող մասնագիտական կրթությունն է: Ըստ այդմ՝ ասպիրանտը բարձրագույն մասնագիտական (մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի) կրթություն ունեցող, հետբուհական կրթական ծրագրով ուսումնառությունն ասպիրանտուրայում շարունակող և գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձ է, որը հետբուհական մասնագիտական կրթական ծրագրով ատեստավորման արդյունքում կարող է ստանալ հետազոտողի որակավորման աստիճան: Իսկ հայցորդը՝ բարձրագույն մասնագիտական կրթություն (մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում) ունեցող և առանց ասպիրանտուրայում սովորելու՝ գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող և գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման նպատակով ատենախոսություն պատրաստող անձ է, որը սահմանված կարգով կցված է հետբուհական մասնագիտական կրթություն իրականացնող կազմակերպությանը: Նոր օրենքի ընդունումից հետո «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը դադարել է գործել բացառությամբ որոշ դրույթների, որոնց իրավագործությունը սահմանված է նոր օրենքի անցումային դրույթներով և եզրափակիչ մասով:

«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի հետբուհական կրթությունը սահմանող կարգավորման մեջ «ասպիրանտ» և «հայցորդ» կարգավիճակներին հետ մեկտեղ առկա էր «հետազոտող» որակավորման աստիճանի մասին դրույթ: Օրենքի այս դրույթը, ըստ էության, տևական ժամանակ չի գործել. հետազոտողի որակավորում կամ չի տրվել բուհերի կողմից, կամ այն չի ընդունվել գործատուների կողմից⁷:

Օրենքն ի թիվս այլի, սահմանում էր պետության քաղաքականությունն ու այլ հանձնառությունները բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտների զարգացման, դրանցում ներգրավված սուբյեկտների հանդեպ: Ըստ այդմ՝ պետական քաղաքականության սկզբունքներից էին բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ապահովումը և պաշտպանությունը, մատչելիությունը, բարձրագույն և հետբուհական կրթության որակավորման աստիճանների համեմատելիությունը, ակադեմիական ազատությունները և ինքնավարությունը խթանելն ու զարգացնելը և այլն:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական քաղաքականության խնդիրներից էին կրթության որակի ապահովումը, պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող բնագավառներում, ինչպես նաև

⁷Ատոմ Մխիթարյան. «Գիտական աստիճանավորման օրենսդրության բարելավման հիմնախնդիրները Հայաստանում», Հյուսիսափայլ գիտական հոդվածների ժողովածու, 2018

սահմանամերձ կամ բարձր լեռնային բնակավայրերում մասնագետների պատրաստմանն աջակցելը, միջազգային գիտակրթական համագործակցության զարգացմանը և դրա ինտեգրմանը նպաստելը, միջազգային ասպարեզում մրցունակության բարձրացումը և այլն: Բարձրագույն և մասնավորապես հետբուհական կրթության ոլորտում զարգացում ապահովելու համար պետությունը կիրառում էր հետևյալ ձևերը՝ հետբուհական կրթության համակարգի կատարելագործում, ֆինանսական աջակցություն հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններին, դրանցում համապատասխան կրթություն ստացողներին (ասպիրանտներ): Այսպիսով, ասպիրանտները, սահմանված կարգով, կարող են օգտվել կրթաթոշակներից, ուսման վարձի փոխհատուցում/գեղչերից (լրիվ և մասնակի), կրթական դրամաշնորհներից, վարկերից: Ավելին, պետական ֆինանսական աջակցություն ստանալու իրավունքը չէր սահմանափակվում միայն պետական գիտաուսումնական հաստատություններով: Ոչ պետական հաստատությունները/կազմակերպությունները հետբուհական կրթական ծրագիր իրականացնելիս համապատասխան մասնագիտություններով հավատարմագրված կրթական ծրագրեր ունենալու պարագայում, ևս կարող էին օգտվել պետական ֆինանսական աջակցությունից:

Օրենքը սահմանում էր նաև բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգը, այդ թվում՝ պետական կրթական չափորոշիչները, հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերը, պետական հավատարմագրման չափանիշները, լիցենզավորված բուհերն ու համապատասխան հետբուհական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունները, դրանց կառավարման մարմինները և այլն: Պետական կրթական չափորոշիչների սահմանելը նպատակ ուներ ապահովել բարձրագույն և հետբուհական կրթության որակը, եվրոպական և օտարերկրյա այլ պետությունների կրթական չափորոշիչների հետ համեմատելիության հնարավորությունները, համապատասխան կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գնահատման հիմքը, կրթության համապատասխան որակավորումների և փաստաթղթերի ճանաչումն ու համարժեքության հաստատումը: Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչները ներառում էին ընդհանուր պահանջներ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագրերի վերաբերյալ, պահանջներ հիմնական կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի, դրանց իրականացման պայմանների, հիմնական կրթական ծրագրերով ուսուցման կազմակերպման ժամկետների կամ անհրաժեշտ կրեդիտային միավորների քանակի, ինչպես նաև սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալի վերաբերյալ: Սրան ավելացրած՝ անկախ սեփականության ձևից և մասնագիտությունից՝ բարձրագույն մասնագիտական հիմնական կրթության բակալավրի կրթական ծրագրում հայոց լեզու և հայ գրականություն, հայոց պատմություն առարկաների ուսուցումը ներառվում էր առնվազն երկու կիսամյակի ընթացքում, որոնք ավարտվում պետք է

գիտելիքների պարտադիր ստուգմամբ⁸։ Ամրագրված էր բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի լիցենզավորման և պետական հավատարմագրման պահանջը։ Ուսումնական հաստատության, դասավանդվող համապատասխան մասնագիտությունների ու կրթական ծրագրերի պետական հավատարմագրումը կարող էր իրականացվում լիցենզիայի առկայության պայմաններում։

Ասպիրանտուրայի ընդունելությունն իրականացվում էր մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի ծրագրով, դիմորդների մրցութային ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա։ Ասպիրանտուրայի ընդունելության, ինչպես նաև դոկտորանտուրայի և հայցորդության ձևակերպման կարգը և մասնագիտությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։ Ըստ ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 25-ի 238-Ն որոշմամբ սահմանված կարգի՝ մրցութային հիմունքներով ասպիրանտուրայի ընդունելությունը իրականացվում էր մագիստրոսի, դիպլոմավորված մասնագետի որակավորման, իսկ բժշկական մասնագիտությունների գծով՝ բժշկի որակավորում, կլինիկական ուղղվածությամբ բժշկական մասնագիտությունների դեպքում՝ բժիշկ-մասնագետի որակավորման առկայության պայմաններում։ Ասպիրանտուրա ընդունվելու համար դիմորդը հանձնում էր մասնագիտական քննություն, ներկայացնում էր համապատասխան օտար լեզվի ատեստավորման վկայականը կամ դրան համապատասխան տեղեկանքը (սահմանված ներքին շեմով՝ բալային գնահատմամբ), ինչպես նաև տվյալ մասնագիտության ոլորտի առնվազն մեկ գիտական աշխատանք կամ սահմանված չափանիշներին համապատասխան ռեֆերատ։ Ասպիրանտուրայում ուսումը կազմակերպվում էր առկա և հեռակա ձևով, անվճար և վճարովի հիմունքներով։ Առկա ձևով ուսուցման տևողությունը չէր գերազանցում 3 տարին, հեռակա ձևով՝ 4 տարին։ Ի տարբերություն ասպիրանտուրային, հայցորդության տևողությունը մինչև 5 տարի կարող է լինել, այն ևս կարող էր իրականացվել անվճար և վճարովի հիմունքներով՝ ուսումնական հաստատության սահմանված կարգով։ Ուսումնառության ընթացքում համապատասխան ատեստավորումներն անցած և մասնագիտական խորհրդում ատենախոսությունը պաշտպանած ասպիրանտը/հայցորդը ստանում էր գիտության թեկնածուի գիտական աստիճան։ Ատենախոսության պաշտպանության չափանիշները, գիտական աստիճանի շնորհման ընթացակարգերը, ինչպես նաև մասնագիտական խորհրդի հետ կապված կարգավորումները սահմանվում էին կառավարության որոշմամբ։ Դոկտորանտուրայում ուսուցման առավելագույն տևողությունը 3 տարի էր։ Դոկտորանտ կարող է ձևակերպվել թեկնածուի գիտական աստիճան ունեցող անձը։

⁸«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մաս

Ներկա իրավիճակը. նոր օրենքն ու ոլորտի կառավարումը

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2025 թվականի սեպտեմբերի 11-ին: Վերջինս շուրջ 10 տարվա աշխատանքի արդյունք է: Օրենքը 2021 թվականին մեկ արգամ ընդունվել էր Ազգային ժողովի կողմից, սակայն հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանը չստորագրեց այն, այլ դիմեց Սահմանադրական դատարան՝ օրենքի համապատասխան դրույթների սահմանադրականությունը ճշտելու նպատակով:

ՀՀ Սահմանադրական դատարանը 2021 թվականի օգոստոսի 2-ի 1608 որոշմամբ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը ճանաչեց Սահմանադրությանը հակասող: Սահմանադրական դատարանի որոշմամբ ամրագրվեց, որ ընդունված օրենքը խնդիրներ ունի բուհական ինքնավարության սկզբունքի հետ: Սահմանադրական դատարանը մասնավորապես անդրադարձել էր հանրային բուհի կառավարման (հոգաբարձուների) խորհրդի ձևավորման կարգին, ըստ որի 9 անդամներից 5-ին նշանակում էր կրթության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարի: Ըստ այդմ՝ լիազոր մարմնի ղեկավարի կողմից բուհի կառավարման խորհրդի մեծամասնության նշանակման հանգամանքն էական հակադրության մեջ է բուհի ինքնավարության սկզբունքի հետ: Արդյունքում օրենքն ուժի մեջ չմտավ, և ԿԳՄՍ նախարարությունը ստիպված եղավ շարունակել աշխատանքները օրենքի նախագծի վրա:

«Երեքը մեկում» նոր օրենքը բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում էական փոփոխություններ է բերում: Մասնավորապես նախատեսվում է ստեղծել նոր տիպի բուհ՝ հետազոտական համալսարան, խոշորացման միջոցով սահմանափակել հանրային (պետական) բուհերի քանակը, ապահովել անվճար բարձրագույն կրթություն հանրային բուհերում, բուհական կրթությունը և գիտությունը կազմակերպումը կենտրոնացնել մեկ տարածքում՝ Ակադեմիական քաղաքում: Բարձրագույն կրթության երրորդ մակարդակը ըստ էության գալիս է փոխարինելու հետբուհական կրթությանը⁹, որի արդյունքում համապատասխան կրեդիտներն ապահովված և ատենախոսությունը պաշտպանած ուսանողը ստանալու է գիտությունների դոկտորի կոչում՝ գիտության թեկնածուի փոխարեն: Սրանով ամրագրվում է գիտական աստիճանաշնորհման միաստիճան համակարգը նախկին երկաստիճանի փոխարեն: Վերջինս կարգավորվում է օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով. «Երրորդ մակարդակում ուսումնառությունը և հետազոտական աշխատանքը ամփոփվում են դոկտորական ատենախոսության պաշտպանությամբ, որի դրական արդյունքով անձին շնորհվում է դոկտորի գիտական աստիճան՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության մասնագիտությունների և

⁹«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մաս

որակավորումների ցանկի մասնագիտություններով»։ Սույն կարգավորումը ուժի մեջ է մտնում 2026 թվականից, մինչ այդ համապատասխան իրավահարաբերությունները կարգավորվում են նախկին օրենքի և դրան համապատասխան այլ իրավական ակտերի տրամաբանությամբ։

Բուհերի կառավարման համակարգում սահմանվում է, որ հանրային բուհի հոգաբարձուների խորհուրդը կազմված է 20 անդամից։ Հոգաբարձուների խորհրդի 10 անդամին առաջադրում է լիազոր մարմինը, մյուս 10-ին՝ բուհը՝ իր ակադեմիական և ուսանողական կազմերից։ Ընդ որում, ուսանողները թիվը հոգաբարձուների խորհրդում հինգից ավել լինել չի կարող։ Հանրային բուհի հոգաբարձուների խորհրդի անդամ չեն կարող նշանակվել հանրային պաշտոններ կամ հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող, ինչպես նաև՝ կուսակցական անդինք¹⁰։ Բուհի հոգաբարձուների խորհրդի կազմի թվաքանակի և խորհրդի անդամների առաջադրման տեսանկյունից չնայած որ, նոր օրենքը դրական իմաստով տարբերվում է 2021 թվականին ԱԺ-ի կողմից ընդունված և ապա Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքից, այստեղ ևս նրբություններ կան, որոնք ուշադրության արժանի են։ Մասնավորապես նախկին (Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին) օրենքով բուհի հոգաբարձուների խորհրդում անդամների առաջադրման լիազորություն ունեին բուհի հիմնադիրը, լիազոր մարմինը, ինչպես նաև բուհը՝ ակադեմիական և ուսանողական կազմերից¹¹։

Օրենքի 31-րդ հոդվածը սահմանում հանրային բուհի ռեկտորի թեկնածուին առաջադրվող պահանջները, ընտրության ընթացակարգերը, պաշտոնավարման պայմաններն ու սահմանափակումները, լիազորությունների շրջանակը։ Մասնավորապես նոր օրենքով հանրային բուհի ռեկտորի պաշտոնում կարող է ընտրվել մինչև 65 տարեկան այն անձը, «...որն ունի գիտական ասպիրանտ և առնվազն տասը տարվա ակադեմիական կամ գիտատեխնոլոգիական գործունեության փորձ, որից առնվազն հինգը կրթության կամ գիտության ոլորտում՝ ղեկավար պաշտոնում»։ Բուհի կանոնադրությամբ կարող են սահմանվել նաև այլ պահանջներ։ Բուհի ռեկտորն ընտրվում է 5 տարի ժամկետով, սակայն նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նույն բուհում ընտրվել ռեկտորի պաշտոնում, այդ թվում՝ բուհի վերակազմավորման կամ կազմակերպական-իրավական ձևի փոփոխության դեպքում։ Սույն կարգավորումը չի տարածվում մինչ օրենքը ուժի մեջ մտնելն ընտրված ռեկտորների վրա։¹² Հետաքրքրական է սույն հոդվածի 5-րդ մասի կարգավորումը. «Հանրային բուհի ռեկտորը պետք է ունենա Լիազոր մարմնի հաստատված, միջազգային հեղինակավոր բուհերի հետ համատեղ իրականացվող բարձրագույն կրթության և հետազոտությունների ոլորտի կառավարիչների կրթական մոդուլը «լավ» կամ «գերազանց» ավարտելը հավաստող

¹⁰ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդված

¹¹ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մաս

¹² «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 10-րդ մաս

փաստաթուղթ կամ Լիազոր մարմնի հաստատած և դրան համարժեք որակավորում»: Վերջինս էապես նոր, նախկինում որևէ կերպ գործածության մեջ չեղած պահանջ է:

Բուհական կառավարման համակարգում լրիվ նոր ինստիտուտ է ներդրվում՝ Էթիկայի և իրավունքի պաշտպանության բուհական գրասենյակ (այսուհետ՝ Էթիկայի գրասենյակ) : Յուրաքանչյուր լիցենզավորված բուհ իր կառուցվածքում պետք է ունենա Էթիկայի գրասենյակ, որը պետք է ստանա, գնահատի և առաջարկի լուծումներ ուսանողների, ակադեմիական կազմի և աշխատակազմի բողոքների դեպքում, որոնք վերաբերում են ակադեմիական, գործառնական, էթիկական կամ բարեվարքությանն առնչվող հարցերին: Էթիկայի գրասենյակի աշխատանքը հիմնված է անկողմնակալության, արդարության և իրավազորության սկզբունքների վրա: Էթիկայի գրասենյակը պետք ապահովի քննարկվող հարցի անկողմնակալ լուծումը՝ համաձայն բուհի կանոնադրության և ընթացակարգերի, անհրաժեշտության դեպքում՝ դիմի վերադաս իրավասու մարմիններ, կամ՝ առաջարկել դիմումատուին դիմել օրենքներով սահմանված այլ պատասխանատու մարմիններ և այլն¹³:

Օրենքի նորույթներից է նաև հետազոտական համալսարան հասկացությունը: Սա բուհի նոր տեսակ է, որն իրականացնում է կրթական ծրագրեր բարձրագույն կրթության բոլոր մակարդակներում, ինչպես նաև ունի իր կազմում գործող առնվազն մեկ գիտական կազմակերպություն և կանոնադրությամբ սահմանված կառուցվածքային այլ միավորներ¹⁴: Ստացվում է՝ վերջինս պարզապես բուհից կամ ավելի ճիշտ է ասես՝ ուսուցանող բուհից, տարբերվում է բարձրագույն կրթության բոլոր երեք մակարդակներում ծրագրեր իրականացնելով և իր կազմում գիտական կազմակերպություն ունենալով: Սակայն որպես բուհի տեսակ միայն «համալսարան» եզրույթ է օգտագործված նոր օրենքում, այն էլ միայն արդեն իսկ նշված հետազոտական համալսարանի համար: Մինչդեռ նախկին օրենքում որպես բուհի համապատասխան տեսակներ նախատեսված էին համալսարան, ինստիտուտ, կոնսերվատորիա, ակադեմիա և այլ ձևեր¹⁵: Նոր տեսակի բուհի՝ հետազոտական համալսարանի, ստեղծումը, ըստ էության, նախատեսված է պետական բուհերի խոշորացման և դրանց կազմում Գիտությունների ազգային ակադեմիայի ենթակայության գիտական կազմակերպությունների ինտեգրացման ճանապարհով¹⁶:

Նոր օրենքով էականորեն փոխվում է Գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետ՝ Ակադեմիա) կարգավիճակը: Օրենքի 9-րդ հոդվածի առաջին մասը

¹³ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդված

¹⁴ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ

¹⁵ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 12 –րդ հոդված

¹⁶ «Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիր» ՀՀ օրենքի հավելվածի 3-րդ բաժնի 81-րդ մասի 2-րդ կետի «է» և «ը» ենթակետեր

սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան Հայաստանի Հանրապետության՝ ի դեմս Կառավարության, հիմնադրած ինքնակառավարվող հիմնադրամ է...»: Մինչդեռ արդեն իսկ ուժը կորցրած «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով՝ «Ակադեմիան Հայաստանի Հանրապետության հիմնադրած՝ հատուկ կարգավիճակ ունեցող, ինքնակառավարվող բարձրագույն գիտական կազմակերպություն է...»: Ստացվում է, որ Ակադեմիան հատուկ կարգավիճակ ունեցող, ինքնակառավարվող բարձրագույն գիտական կազմակերպությունից վերածվում է «ընդհամենը» ինքնակառավարվող հիմնադրամի: Ավելին, նոր օրենքով պետությունը ի դեմս ՀՀ կառավարության նոր լիազորություններ է ստանում Ակադեմիայի կառավարման մարմինների ձևավորման և հաստատման մասով: Օրենքի 9-րդ հոդվածը սահմանվում է, որ Ակադեմիայի նախագահությունը բաղկացած է 11 անդամից, որոնցից 2-ին նշանակում է ՀՀ կառավարությունը: ՀՀ նախագահը գլխավորում է Ակադեմիայի նախագահությունը, իսկ Ակադեմիայի նախագահի ընտրության արդյունքները հաստատվում է ՀՀ կառավարության կողմից: Այսօրինակ դրույթներ նախկին օրենքում չեն եղել, ինչը տպավորություն է ստեղծում, որ արդյունքում իջեցվում է Ակադեմիայի կարգավիճակը՝ այն ավելի կախյալ է դառնում գործադիր իշխանությունից:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածը վերաբերում է բարձրագույն կրթության և գիտության ֆինանսավորմանը: Ըստ այդմ, ֆինանսավորման աղբյուրներ են ՀՀ պետական բյուջեից ստացված ֆինանսավորումը, դրամաշնորհները, վճարովի ուսուցման ծառայություններից ստացված եկամուտները, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները, գիտական արդյունքի ներդրումից և իրացումից գոյացած միջոցները, ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները, այլ պետություններից նվիրաբերությունները, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված միջոցները: Բուհերին պետական բյուջեից միջոցներ կարող են տրամադրվել իստիտուցիոնալ, թիրախային, դրամաշնորհային ֆինանսավորման և կրթաթոշակի տրամադրման տեսքով: Գիտատեխնոլոգիական գործունեության պետական բյուջետային ֆինանսավորման ձևերն են՝ բազային, թիրախային և գիտական դրամաշնորհային ֆինանսավորումը:

Վերջին 5 տարիներին ՀՀ կրթության բնագավառի պետական բյուջեն շարունակ աճ է գրանցել. 2020 թվականի համեմատ 2024 թվականի բյուջեն ավելացել է 2.3 անգամ՝ հասնելով 317.2 միլիարդ ՀՀ դրամի¹⁷: Դրա արդյունքում կրթության բյուջեի մասնաբաժինը ՀՀ պետական բյուջեում հասել է շուրջ 10 տոկոսի: Ավելին՝ վերջին տարիներին առաջին անգամ կրթության բյուջեի մասնաբաժինը համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեջ շուրջ 3 տոկոս է կազմել, մինչդեռ տևական ժամանակ այդ հարաբերակացությունը 2.2-2.5 տոկոսի տիրույթում է

¹⁷https://budgets.am/wp-content/uploads/2024/07/Education_Simplified-Budget_EDRC-2.pdf

տատանվել: Պետական զարգացման ծրագրում՝ «կատեղծվեն 100% պետական ֆինանսավորմամբ մինչև ութ բուհ՝ չբացառելով վճարովի ուսուցման հնարավորությունը»¹⁸, կամ «բարձրագույն կրթության երրորդ մակարդակում ընդունելության տեղերի ավելացում առնվազն երեք անգամ»¹⁹ և նմանատիպ այլ ցուցանիշների առկայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ առաջիկայում ոլորտի բյուջեի ավելացում պետք է սպասել: Սակայն զարգացում ապահովելու համար, անհրաժեշտ է, որ ոլորտային բյուջեն ՀՆԱ-ի հարաբերակցությամբ 4-6 տոկոսի շրջանակում լինի, իսկ պետական բյուջեի հարաբերակցությամբ՝ 15-20 տոկոս²⁰: Մինչդեռ ըստ Համաշխարհային բանկի 2023 թվականի տվյալների, Հայաստանը բարձրագույն կրթության ոլորտում սովորողների մեկ շնչին ընկնող պետական ֆինանսավորման ցուցանիշով ամենացածր տեղում է թե՛ տարածաշրջանում, թե՛ դրանից դուրս²¹: Այնուհանդերձ, 2024 թվականի կրթության բյուջեում բարձրագույն և հետբուհական կրթության ծրագրին հատկացվել է բյուջեի 7.5 տոկոսը՝ 14.6 մլրդ. դրամ, ինչը նախորդ տարվա համեմատ 15 տոկոսով ավել է: Վերջինս կրթության բյուջեի մեծությամբ 5-րդ ծրագիրն է: ՀՀ բարձրագույն և հետբուհական կրթության ծրագրի 2025 թվականի առաջին 9 ամիսների ցուցանիշը ընդհանուր առմամբ համադրելի է նախորդ տարվա ցուցանիշի հետ, սակայն որոշակի նվազման միտումով²²:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտներում իր լիազորությունները իրականացնում է համեմատաբար նորաստեղծ ՀՀ ԿԳՄՍ նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) միջոցով: Կոմիտեն ձևավորվել է 2023 թվականին²³ նախարարության ենթակայությամբ նախկինում գործող երկու ենթակա մարմինների՝ Գիտության կոմիտեի և Բարձրագույն որակավորման կոմիտեի, ինչպես նաև նախարարության բարձրագույն և հետբուհական կրթության հարցերով զբաղվող համապատասխան ստորաբաժանման հենքի վրա: Կոմիտեի կազմում երեք մասնագիտական ստորաբաժանումներ են՝ Բարձրագույն կրթության և գիտության քաղաքականության, Ծրագրերի իրականացման, ինչպես նաև՝ Փորձաքննության և վերլուծությունների վարչությունները: Վարչություններն էլ իրենց հերթին կազմված են բաժիններից, որոնք էլ անմիջականորեն պատասխանատու են Կոմիտեի նպատակների իրականացման ու համապատասխան խնդիրների լուծման համար: Հետբուհական կրթության ոլորտում, մասնավորապես, Կոմիտեի նպատակներից է հետբուհական մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ապահովումը,

¹⁸ «Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիր» ՀՀ օրենքի հավելվածի 4-րդ բաժնի 86-րդ մասի 15-րդ կետ

¹⁹ Նույն տեղում՝ 3-րդ բաժին, 81-րդ մաս, 5-րդ կետ, «Ժ» ենթակետ

²⁰ Education 2030 Icheon Declaration and Framework for Action for Sustainable Development Goal 4.

²¹ Armenia Public Finance Review, Enhancing Fiscal Policy Efficiency, December, 2024, page 69

²² ՀՀ հետբուհական կրթության ոլորտի 2020-2025 բյուջեի պարզեցված վերլուծությունը՝ հավելվածում

²³ Կոմիտեի կանոնադրությունը հաստատվել է ԿԳՄՍ նախարարի 2023թ. հուլիսի 12 28-Լ հրամանով

հետբուհական մասնագիտական կրթության որակավորման աստիճանների համեմատելիությունը, դիպլոմների ճանաչելիությունն ապահովելը: Հետբուհական կրթության ոլորտում Կոմիտեի խնդիրներից է հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում բարեփոխումների իրականացումը, զարգացման ապահովումը, հետբուհական մասնագիտական կրթության բովանդակային հենքի ու կրթական գործընթացի բարելավմանը, արդիականացմանը և որակի ապահովմանը նպաստումը:

Կոմիտեի կայքում հրապարակված տեղեկատվությունից երևում է, որ Կոմիտեն 2020 թվականից սկսել է վարել ՀՀ-ում գրանցված գիտաշխատողների շտեմարան: Կոմիտեի հաշվետվություններում 2020, 2021 և 2022 թվականների համապատասխան տվյալները առկա են, սակայն, բացակայում են 2023 և 2024 թվականի տվյալները, տես աղյուսակ 1-ը:

Աղյուսակ1. Գիտաշխատողների շտեմարան (տվյալները համապատասխան տարվա դեկտեմբերի դրությամբ)

	տարի	Կազմակերպությունների թիվ	Ընդհանուր գիտաշխատողներ	Գրանցված	դոկտոր	Գիտ. թեկնածու	Վարչական
1	2020	97	5963	3886	638	1883	2077
2	2021	93	5853	3815	609	1847	1417
3	2022	82	5442	3685	530	1752	1757

Աղյուսակ 1-ի տվյալներից տեսնում ենք, որ վերը բերված բոլոր առանցքային ցուցանիշներով առկա է քանակական նվազումներ:

Կոմիտեի 2020, 2021 և 2022 թվականների հաշվետվություններում առկա են տվյալներ գիտական աստիճանի համար հավելավճար ստացողների թվի վերաբերյալ: Ըստ այդմ՝ 2020թ. դեկտեմբերի դրությամբ հավելավճար է ստացել 484 գիտության դոկտոր և 1367 թեկնածու: 2021թ.-ին այս ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 503 դոկտոր և 1503 թեկնածու, իսկ 2022թ.-ին՝ 517 դոկտոր և 1577 թեկնածու: Գիտական աստիճանի համար հավելավճար ստացածների թվի աճը դրական է, սակայն 2023 և 2024 թվականների համար Կոմիտեի հաշվետվություններում այս տվյալների մասին տեղեկատվությունը բացակայում է:

Գծապատկեր 1. Գիտական աստիճանի դիմաց հավելավճար ստացողների (տվյալ տարվա դեկտեմբեր ամսվա դրությամբ)



Կոմիտեն իր հաշվետվություններում անդրադարձել է նաև պետության կողմից գիտության և գիտատեխնիկական ոլորտներում ներգրավվածների աշխատավարձերի բարձրացման քաղաքականությանը: ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի 747-Լ որոշմամբ ներ է դրվել 2022- 2025 թվականների բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի նվազագույն պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցները և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրերում ընդգրկված գիտական կադրերի աշխատավարձերի նորմավորման գործընթացը: Ըստ այդմ՝ 2022-2025 թվականներին ատեստավորում անցած գիտական կադրերի աշխատավարձերը, ըստ համապատասխան պաշտոնների և դրույքաչափի, աճելու է 78-367%:

Աղյուսակ 1. Գիտության և գիտատեխնիկական ոլորտներում ներգրավվածների աշխատավարձերի բարձրացման դինամիկան

Պաշտոն/տարակարգ	Ատեստավորումից առաջ ամսական միջին աշխատավարձ 2021թ. Հազար դրամ	Ամսական նվազագույն աշխատավարձ					
		2022թ.		2023թ.		2024թ.	
		Հազար դրամ	աճ 2021-ի նկատմամբ, %	Հազար դրամ	աճ 2021-ի նկատմամբ, %	Հազար դրամ	աճ 2021-ի նկատմամբ, %
Լաբորանտ կամ ճարտարագետ	67.3	102.5	52%	110	63%	120	78%
Ավագ լաբորանտ կամ ավագ ճարտարագետ	76	110	45%	130	71%	156	205%
Կրտսեր գիտական աշխատող	85.8	120	40%	150	75%	180	210%
Գիտական աշխատող	90.4	150	66%	200	121%	230	254%
Ավագ գիտական աշխատող	99	200	102%	250	152%	300	303%
Առաջատար գիտական աշխատող	114.3	250	119%	350	206%	420	367%
Գլխավոր գիտական աշխատող	138.1	367.1	166%	450	226%	500	362%
Գիտական խմբի ղեկավար	129.1	230	78%	280	117%	350	271%
Գիտական ստորաբաժանի ղեկավար	141.4	350	148%	400	183%	450	318%

Կոմիտեն իր հաշվետվություններում նաև հրապարակում է տվյալ տարում ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտական աշխատանքներին աջակցելու համար նախատեսված ներպետական մրցույթների քանակական տվյալները, տես աղյուսակ 3-ը:

Աղյուսակ 3. Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր

	Տարի	Հայտեր քանակ	Ֆինանսավորված հայտեր	Տևողություն
1	2020	32	11	12-36 ամիս
2	2021	43	29	12- 36 ամիս
3	2022	31	26	Ֆինանսավորումը սկսվել է 2022 հոկտեմբերից
4	2023	43	42	Ֆինանսավորումը սկսվել է 2023 թվականի հոկտեմբերից

Պետության կողմից երիտասարդ հետազոտողների ծրագրերի ֆինանսավորման քանակական աճը դրական միտում ունի: Սակայն ակնհայտ է, որ նույնիսկ մեկ տարում 65 ծրագրի ֆինանսավորումը (ամենամեծ թվաքանակը վերջին 5 տարիներին) համարժեք չէ տվյալ տարում ասպիրանտների և հայցորդների ընդհանուր թվին: Համեմատության համար 2020-2021 ուսումնական տարում պետական ամբողջական ֆինանսավորմամբ ընդհանուր թվով 175 ասպիրանտական տեղ է հատկացվել, որից 151-ը տեղական բուհերում և գիտական կազմակերպություններում, իսկ 24-ը՝ միջպետական համաձայնագրերի հիմքով: 2021-2022 ուստարվանից սկսած մինչև 2025-2026 ուսումնական տարին, պետական ամբողջական աջակցությամբ ասպիրանտական տեղերի հատկացումն ավելացել է 20 %-ով՝ տարեկան կազմելով 151 ստացիոնար, 35՝ հեռակա և 24՝ միջպետական համաձայնագրի հիմքով, ընդհանուր 210 տեղ: 2025-2026 ուստարվա համար հատկացված տեղերի թիվը նախորդ տարիների համեմատությամբ ևս փոքրինչ ավելացում է գրանցել՝ կազմելով ընդհանուր 215 տեղ (144՝ ստացիոնար, 36՝ հեռակա և 35՝ միջպետական համաձայնագրերով) : Նշված թվերը պարզ միջինացնելով, ստացվում է որ 2020-2024 թվականների համար միջին թվով տարեկան 203 ասպիրանտին (չհաշված այդ նույն տարիներին հայցորդություն իրականացնողների թիվը) բաժին է ընկնում ներպետական միջոցներով ֆինանսավորված տարեկան 34.6 հետազոտական ծրագիր կամ քիչ ավել քան 17%: 2020/2021-2025/2026 ուսումնական տարիներին պետության կողմից ամբողջական ֆինանսավորմամբ (ստացիոնար, հեռակա և միջպետական համաձայնագրերով) հատկացված ասպիրանտական տեղերի²⁴ բովանդակային ուղղությունների բաշխվածությունը ներկայացված է աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. 2020-2025 թթ. տեղական բուհերում և գիտական կազմակերպություններում հատկացված ասպիրանտական տեղերը ըստ


²⁴ Տվյալների ամփոփումն իրականացվել է հիմք ընդունելով ՀՀ կառավարության՝ 2020թ. մայիսի 21-ի 808-Ն, 2021թ. մայիսի 20-ի 799-Ն, 2022թ. ապրիլի 7-ի 437-Ն, 2023թ. ապրիլի 6-ի 468-Ն, 2024թ. մայիսի 16-ի 701-Ն և 2025թ. մայիսի 29-ի 674-Ն որոշումները:

ուղղությունների (բաշխվածությունը հաշվարկված է միայն տեղական բուհերին/գիտ. կազմակերպություններին հատկացված տեղերի մասով. միջպետական համաձայնագրերով հատկացված տեղերի գիտական ուղղությունների վերաբերյալ համապատասխան որոշումների մեջ տեղեկատվություն առկա չէ)²⁵

Ուս. տարի	Բոլորը միասին (այդ թվում՝ միջպետական պայմանագրերով)	ԲՏՃՄ	Հասարակական գիտություններ	Հումանիտար գիտություններ	Այլ	Ընդամենը
2020/2021	188	113	27	17	7	164
2021/2022	210	120	32	22	12	186
2022/2023	210	121	34	22	9	186
2023/2024	210	118	36	22	10	186
2024/2025	305	171	49	34	16	270
2025/2026	215	126	31	14	9	180
	Ընդհանուր	769	209	131	63	1172

²⁵ Ուղղությունները դասակարգումը կատարվել է հիմք ընդունելով «OECD Frascati Manual 2015», Guidelines for Collecting and Reporting Data on Research and Experimental Development

Գծապատկեր 2. 2020-2025 թթ. տեղական բուհերում և գիտական կազմակերպություններում ասպիրանտական տեղերի հատկացման դինամիկան




Աղյուսակ 4-ից, ինչպես նաև վերը բերված գծապատկերից պարզ է դառնում, որ նշված ժամանակահատվածում ընդհանուր 166 տեղ է հատկացվել միջպետական համաձայնագրերով հետբուհական կրթության համար՝ 2020-2023 թվականներին տարեկան 24, իսկ 2024-2025 թվականներին՝ տարեկան 35 տեղ: Ավելին, Պետական զարգացման ծրագրի գործողությունների ծրագրով ասպիրանտական տեղերի հատկացման համար հստակ քանակական ցուցանիշներ են սահմանված: Ըստ այդմ՝ 2023 և 2024 թվականներին պետք է հատկացվեր համապատասխանաբար առնվազն 210 և 270 ասպիրանտական տեղ: 2026 թվականի համար առնվազն 340 տեղ է նախատեսված, իսկ 2030-ին՝ առնվազն 650²⁶: Ստացվում է է, որ 2024 թվականի «առնվազն 210» տեղ ցուցանիշն ապահովվել նաև միջպետական համաձայնագրերով հատկացված 24 տեղի հաշվին, մինչդեռ 2024-ին՝ 270 տեղ ուղղակիորեն հատկացվել է տեղական բուհերում և գիտական կազմակերպություններում ասպիրանտական կրթության համար: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ մինչև 2030 թվականը Զարգացման պետական ծրագրի գործունեության ծրագրով ասպիրանտական տեղերի

²⁶ ՀՀ կառավարության 2023 թվականի մարտի 16-ի N 351-Լ որոշման 1-ին հավելվածի 2.3.4 կետ

հակադարձացման կոնկրետ քանակական ցուցանիշներ սահմանված են ոչ բոլոր տարիների համար: Այդօրինակ ցուցանիշ սահմանված չէ 2025 թվականի համար, միաժամանակ աղյուսակ 3-ից տեսնում ենք, որ ասպիրանտական տեղերի հատկացման առումով 2025 թվականին որոշակի նվազում կա: Իսկ 2026 թվականից հետո ասպիրանտական տեղերի հատկացման ցուցանիշ միայն սահմանված է 2030 թվականի համար:

Միաժամանակ, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով 2020-2024 թվականներին գիտության թեկնածուի աստիճան պաշտպանել է 326 հայցող, որից ԲՏՃՄ՝ 144, հասարակական գիտություններից՝ 154, իսկ հումանիտար գիտություններից՝ 17: Սակայն նույն ժամանակահատվածում ըստ Վիճակագրական կոմիտեի տվյալների, միայն ասպիրանտներից գիտության թեկնածուի աստիճանի արժանացածների թվային պատկերը հետևյալն է.

Գծապատկեր3. Գիտության թեկնածուի աստիճան ստացած ասպիրանտների թիվը և տոկոսային հարավերակցությունը



Ըստ վերը բերված թվերի, ստացվում է 2020-2022 թվականներին ասպիրանտուրա ավարտողների թիվը մնացել է համեմատաբար կայուն (շուրջ 230), սակայն 2023-ին նկատվում է կտրուկ անկում (180), իսկ 2024-ին ավարտածների թիվ էլ ավելի նվազել

է՝ կազմելով ընդհանուր թվով 145: Չնայած ավարտողների ընդհանուր թվի նվազմանը, թեկնածուական պաշտպանությունների բացարձակ թվի կայունությունը և, հատկապես, աճի տոկոսը կարող է վկայել համակարգի արդյունավետության բարձրացման միտման մասին: Ասպիրանտուրան ավարտածների շարքում գիտական աստիճան պաշտպանածների մասնաբաժինը 2020 թ-ի 17.4%-ից աճել է և և 2024 թվականին կազմել է 45.5%-ը: Սա նշանակում է, որ 2024 թվականին ասպիրանտուրա ավարտած գրեթե յուրաքանչյուր երկրորդը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: Եվ քանի որ ասպիրանտուրա ավարտողների ընդհանուր թիվը նվազում է, սակայն պաշտպանությունների թիվը մնում է բարձր, հավանական է, որ համակարգը «մաքրվում է»: Խետբուհական կրթության ընտրությունը դառնում է շատ ավելի գիտակցված ընտրություն՝ աստիճանաբար վերածվելով հենց գիտական կադրեր պատրաստող համակարգի, այլ ոչ թե լրացուցիչ կրթության հերթական հնարավորության:

Բացահայտված խնդիրներ, դրանց կարգավորման ուղղությամբ առաջարկություններ

2022 թվականին ԱԺ-ի կողմից ընդունված «Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիր» ՀՀ օրենքի հավելվածի 1-ին բաժնում՝ Կրթության համակարգի առկա վիճակը և հիմնախնդիրները, ի թիվս այլի, անդրադարձ կա բարձրագույն և Խետբուհական կրթությանը, ըստ որի առավելապես մագիստրատուրայի և դոկտորանտուրայի (ասպիրանտուրայի) կրթական ծրագրերում Խետազոտական և կրթական բաղադրիչները համահունչ չեն: Ասպիրանտների և հայցորդների գիտական ղեկավարների միջին տարիքը բարձր է: Գիտական ղեկավարների 51%-ից ավելին 65 տարեկանից բարձր է, 25%-ից ավելին՝ 55-64 տարիքային խմբում է, իսկ 12%-ը՝ 45-55 տարիքային խմբում: Ծերացմանը և սերնդափոխությանն առնչվող խնդիրները նկատելի են ԲՏԾՄ ուղղություններում: ԲՏԾՄ մասնագիտություններում ներգրավված գիտական ղեկավարների 62%-ից ավելին 65 տարեկանից բարձր է, իսկ 7%-ը 45-55 տարիքային խմբում է: 2012-2016 թվականներն ընկած ժամանակահատվածում ասպիրանտական կրթության համար ընդհանուր առմամբ հատկացվել է 1787 տեղ (նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ (անվճար) առկա և Խեռակա ուսուցմամբ), իսկ 2016-2020 թվականների ժամանակահատվածում պաշտպանել է ընդամենը 625 ասպիրանտ (հատկացված տեղերի 35%-ը): Ատենախոսությունը պաշտպանածների միջինացված տոկոսը, հանրակրթության շրջանավարտների թվի համեմատ, չորս տարվա համար կազմում է 0.29%, որը գրեթե 2,5 անգամ ցածր է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) միջինացված 0.72% ցուցանիշից, իսկ եթե համեմատենք ԵՄ երկրների ցուցանիշի հետ, պատկերը էլ ավելի վատ է: 2023

թվականի դրությամբ ԵՄ երկրների 1000 բնակչի շուրջ 1.3 տոկոսը գիտության դոկտորի (PhD) կոչում ունի²⁷:

Զարգացման պետական ծրագրի նշված բաժնում անդրադարձ կա նաև հետազոտողների տպագրություններին: Ասպիրանտների տպագրությունները միջազգային վարկանիշային պարբերականներում ցածր տոկոս են կազմում առավելապես հումանիտար և հասարակական գիտությունների բնագավառում: Նշված բնագավառներում թեկնածուական ատենախոսությունների միայն 2-3%-ի հիմնական արդյունքներից մեկն է տպագրվել «Scopus» կամ «Web of Science Core Collection» շտեմարաններում ընդգրկված պարբերականներում, այնինչ ԲՏԾՄ մասնագիտությունների պարագայում այն հասնում է 60-70%-ի: Պետական զարգացման ծրագրում արձանագրվել է նաև, որ «ասպիրանտական կրթության կազմակերպումը և գիտական աստիճանաշնորհման պահանջները վերանայման կարիք ունեն, քանի որ դրանք այլևս արդիական չեն»: Վերը բերված խնդիրների լուծման ուղղությամբ, Զարգացման պետական ծրագրով նախատեսվում է՝ «բարձրագույն կրթության երրորդ մակարդակում ընդունելության տեղերի ավելացում առնվազն երեք անգամ»²⁸: Մինչդեռ որպես վերջինիս մշտադիտարկման և արդյունքի ցուցանիշ սահմանված է՝ «կրթություն-գիտություն փոխգործակցություն, ասպիրանտների թվի կտրուկ աճ»²⁹:

ՀՀ հետբուհական կրթության ոլորտի իրավակարգավորումների արդյունավետության և դրված նպատակներին հասնելու պետական ֆինանսավորման ծավալի համապատասխանության մասին առավել առարկայական պատկեր ստանալու համար սույն ուսումնասիրության շրջանակում իրականացվել է հարցում տվյալ պահին գործող ասպիրանտների և հայցորդների շրջանում, ինչպես նաև փորձագիտական հարցազրույցներ ոլորտի մասնագետների հետ:

Փորձագիտական հարցազրույցների արդյունքների ամփոփում

Սույն հետազոտության շրջանակում իրականացվել են թվով տասը փորձագիտական հարցազրույց ոլորտի մասնագետների հետ, այդ թվում՝ համալսարաններում և գիտական կազմակերպություններում ներգրավված մասնագետների հետ, որոնց գործունեությունն անմիջականորեն կապված է հետբուհական կրթության (բարձրագույն կրթության երրորդ մակարդակի ծրագրի) կազմակերպման հետ, այդ թվում նաև՝ գիտական ղեկավարներ, ամբիոնի վարիչներ: Հարցազրույցի նպատակն է եղել պարզել փորձագետների կարծիքը հետբուհական կրթության արդյունավետությանը վերաբերող հետևյալ հարցերի շուրջ.

²⁷ [https://ec.europa.eu/eurostat/databrowser/view/educ_uoe_grad06\\$defaultview/default/bar?lang=en](https://ec.europa.eu/eurostat/databrowser/view/educ_uoe_grad06$defaultview/default/bar?lang=en)

²⁸ Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիր» ՀՀ օրենքի հավելվածի 3-րդ բաժնի 81-րդ մասի 5-րդ կետի «ժէ» ենթակետ

²⁹ Կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիր» ՀՀ օրենքի հավելվածի 4-րդ բաժնի 86-րդ մասի 19-րդ կետ

- Հետբուհական կրթությունը Հայաստանում պատրաստում է արդյո՞ք մրցունակ գիտնականներ:
- Հետբուհական կրթության կազմակերպման գործող ձևաչափն որքանո՞վ է արդյունավետ իր նպատակին ծառայելու տեսանկյունից:
- Ի՞նչն է ամենակարևոր խոչընդոտը գիտական որակյալ աշխատանք կատարելու համար:
- Որքանո՞վ է ներպետական գիտահետազոտական դրամաշնորհային համակարգը նպաստում գիտական որակյալ աշխատանք կատարելու համար:
- Ի՞նչ է պետք փոխել/բարելավել հետբուհական կրթության համակարգում ցանկալի արդյունքին հասնելու համար/մրցունակ գիտնականներ պատրաստելու համար:

Հետբուհական կրթությունը Հայաստանում պատրաստում է արդյո՞ք մրցունակ գիտնականներ: Այս հարցին փորձագետները դժվարանում են միանշանակ պատասխանել: Հարցը կապում են բուհի և դրանում ներգրավված մասնագետների որակի հետ և նշում են, որ կան ուղղություններ, որոնցում պատրաստվում են մրցունակ գիտնականներ: Ըստ միջազգային պարբերականներում տպագրության քանակի՝ բնագիտության ոլորտում մասնագիտացող գիտնականներն ավելի բարձր արդյունքներ ունեն:

Մրցունակ գիտնականների հարցը փորձագետները կապում են նաև հենց հետազոտողների պատրաստվածության՝ գիտելիքների և հմտությունների, մոտիվացիայի և կամքի հետ, թե որքան են աշխատում իրենց վրա: Այս առումով, կան մտահոգություններ, որ հետբուհական կրթության մեջ ներգրավվում են հետազոտողներ, որոնք չունեն գիտական որակյալ աշխատանք կատարելու ներուժ: Կարևորվում են նաև օտար լեզուների, հատկապես անգլերենի իմացությունը, նշվում է առնվազն երկու օտար լեզուներ իմանալու անհրաժեշտությունը որակյալ հետազոտություն իրականացնելու համար:

Փորձագետները նշում են, որ ավելացել են խթանող գործոնները, մասնավորապես՝ ներպետական գիտահետազոտական դրամաշնորհները, որոնք մեծացնում են հետազոտողների մոտիվացիան:

Այս հարցի հետ կապված մյուս խնդիրը կապված է ընդունելության հետ, այն է՝ ասպիրանտի և հայցորդի նկատմամբ պահանջները տարբեր են/խտրական են, քանի որ ասպիրանտի համար դրանք ավելի խիստ են և ծախսատար, քան հայցորդի համար: Հայաստանյան իրականության մեջ շատ ամբիոններ չահագրգռված են ժամեր ունենալու հարցում ինչն անում են հայցորդներ ձևակերպելու միջոցով, որն էլ բնականաբար կարող է ազդել, թե ինչ որակի հետազոտողներ են ընդունվում:

Հետբուհական կրթության առկա ձևաչափը որքանո՞վ է արդյունավետ իր նպատակին ծառայելու տեսանկյունից: Փորձագետները նշում են, որ այսօր

հետքուհական կրթությունը մատչելի և հասանելի է շատերին, գործող ձևաչափն արդարացված է՝ ասպիրանտուրան երիտասարդների համար է, հայցորդությունը՝ կայացած մարդկանց, և փորձը ցույց է տալիս որ հայցորդական համակարգ դիմում են կայացած մարդիկ:

Միաժամանակ, ըստ փորձագետների՝ վերջին հինգը տարիներին բարձրագույն կրթության երրորդ մակարդակը գնալով անկում է ապրում, քանի որ ասպիրանտների և հայցորդների թիվը նվազել է, որը պայմանավորված է և՛ պետության կողմից սահմանված տեղերի կրճատմամբ, և՛ հետաքրքրված անձանց պակասով, արդյունքում հատկացված ոչ բոլոր տեղերն են լրացվում, ինչպես նաև այն հանգամանքով, որ դրսում գիտական կոչում ստանալու հնարավորություններն անհամեմատ մեծացել են: Հետաքրքրությունն անկում է ապրել նաև այն պատճառով, որ գիտական կոչում ստանալու մեջ նյութական/ֆինանսական շահագրգռվածություն չկա. գիտական կոչումը առանձնապես որևէ բան չի տալիս: Նույնիսկ նրանց համար, ովքեր հետազոտություն անելու հետաքրքրվածություն ունեն, ներկա պայմաններում նշանակում է առնվազն 3 տարի ուղղակի ոչ մի եկամուտ չունենալ, այլ բանով չբավարարվել: Մինչդեռ նրանք ստիպված են լինելու համատեղել աշխատանքը, ընտանիքը և հետազոտությունը:

Առկա ձևաչափի հետ կապված փորձագետների կողմից նշվում են հետևյալ հիմնական խնդիրները և դրանց ուղղությամբ հավանական լուծումները.

Կրեդիտային համակարգը ճկուն չէ:

(Ա) Հետազոտական բաղադրիչի մեջ կա 3 բաժին՝ մեկն ատեստավորումների համար, մյուսը՝ 6 հոգված տպագրելու, և ատենախոսությունն պատրաստելու, բայց ցանկալի կլիներ, եթե նաև լինեին խրախուսական տարրեր, օրինակ՝ եթե ասպիրանտը մասնակցում է գիտաժողովների, սեմինարների, նեղ մասնագիտական որոշակի դասընթացների, դրանցից ևս որոշակի կրեդիտներ ստանալու հնարավորություն լիներ, որպեսզի նրանք շահագրգռված լինեին մասնակցելու նման միջոցառումների:

(Բ) Ատեստավորման համար կրեդիտ տալը հիմնավոր չէ, քանի որ ստացվում է՝ ասպիրանտը կամ հայցորդը ստանում է կրեդիտ կրեդիտ կուտակելու համար:

(Գ) Երրորդ խնդիրը կապված է պրակտիկայի ինստիտուտի հետ. կրեդիտային համակարգով նախատեսված է 10 կրեդիտ պրակտիկայի համար, բայց գործող կարգավորումն իրավական ձևով անիմաստ է, եթե ասպիրանտը ներկայացնում է 6 ամսյա աշխատանքային ցանկացած ստաժի մասին տեղեկանք, ընդ որում պահանջ չկա, որ դա պետք է լինի մասնագիտական կամ մանկավարժական ստաժ, ապա նա ստանում է այդ կրեդիտը: Դրա փոխարեն ավելի իմաստավոր կլիներ, որ համալսարանները և գիտական կենտրոնները տրամադրեին որոշակի ժամաքանակ ասպիրանտների համար, օրինակ՝ պրոֆեսորի օգնականի հաստիք:

(Դ) Դասընթացների մասնակցությունից կրեդիտներ ստանալու գործընթացը ևս ճկուն չէ: Կարելի է առաջարկել հետազոտողներին ոչ միայն տվյալ բուհի կողմից առաջարկված կրեդիտային դասընթացներից ընտրել, այլև իր հետազոտական

աշխատանքի տեսանկյունից կարևորություն ունեցող վարկանիշավորված 1000 բուհերի որևէ դասընթացներից ընտրել (կարող է լինել անվճար կամ վճարովի) :

Դասընթացները թիրախային չեն և լավ չեն համապատասխանեցված հետազոտողների կարիքներին:

Ա. Դասընթացները հիմնականում ուղղված են հմտությունների զարգացմանը, չկան նեղ մասնագիտական դասընթացներ: Նեղ մասնագիտական դասընթացներ մշակելն ու ներդնելը շատ մեծ ծածկույթը է ներառում, որը համալսարաններն ի վիճակի չեն կամ դժվարանում են անել: Կան որոշ լավ օրինակներ. անգլերենի դասընթացն որոշ բուհերում տրամադրվում է տարբեր մակարդակների և տարբեր՝ հումանիտար և բնագիտական հոսքերի համար, կամ մանկավարժությունը՝ մասնագիտական բուհերում:

Ի՞նչն է ամենակարևոր խոչընդոտը գիտական որակյալ աշխատանք կատարելու համար: Փորձագետները նշում են գիտական որակյալ աշխատանք կատարելու հետ կապված հետևյալ խոչընդոտները.

Հայցորդական ինստիտուտի վերացումը. իսկական գիտնականները, որոնք պրակտիկայից գալիս են տեսություն, հայցորդներն են:

Օտար լեզուների իմացության ցածր մակարդակը կամ բացակայությունը. հետազոտողները սովորաբար չեն տիրապետում օտար լեզուների, հատկապես՝ հայցորդները, որոնց ընդունելության համար չի պահանջվում օտար լեզվի քննություն:

Հետազոտողների զբաղվածությունը. հետազոտողները աշխատում են մի քանի տեղ: Գիտնականի որպես սոցիալական դերի ոչ գրավիչ լինելը. վերջինս հետևանք է պետություն-գիտություն ոչ արդյունավետ կապի, գիտնականի հասարակական արժևորմանն ուղղված քայլերի բացակայության: Վերջին տարիներին ասպիրանտական տեղերը թափուր են մնում, քանի որ հետաքրքրությունը նվազել է:

Որքանո՞վ է ներպետական գիտահետազոտական դրամաշնորհային համակարգը նպաստում գիտական որակյալ աշխատանք կատարելու համար: Ընդհանուր առմամբ փորձագետները համաձայն են, որ ներպետական գիտահետազոտական դրամաշնորհային համակարգը դրական դերակատարում ունի գիտության զարգացման տեսանկյունից, ինչպես նաև ներպետական խնդիրների կարևորման և դրանց լուծման տեսանկյունից:

Դրամաշնորհային համակարգի մասին մտահոգությունների շարքում նշվում է, որ այն լավ մտածված չէ և մատչելի չէ բոլորի համար, քանի որ ծրագրերը հիմնված չեն նախնական հետազոտությունների վրա, վերցված են տարբեր օրինակներից և չեն համապատասխան իրական պահանջներին:

Արտասահմանից գիտական ղեկավարի կամ խորհրդատուի ներգրավման պարտադիր պահանջը ևս դիտվում է որպես սահմանափակող և չհիմնավորված, քանի որ անհասկանալի է, թե ինչու ներսից մասնագետը չի կարող ավելի լավը

լինել, քան դրսինը: Փաստացի ծրագրերում ներգրավված են Հայաստանից տեղափոխված կամ ծագումով հայ մասնագետներ:

Որոշ փորձագետներ նշում են, որ թափանցիկության և օբյեկտիվության խնդիր կա, քանի որ անհնարին է բողոքարկելը կամ մերժման պատճառն իմանալը:

Նշում են նաև, որ պետք են նաև ներհամալսարանական և ներպետական այնպիսի դրամաշնորհներ, որոնք նախատեսված են ավելի բարձր տարիքի (նոր լեզու սովորելու դժվարություններ ունեցող) գիտնականների համար, որոնք ևս կարող են գիտական արդյունք ստեղծել: Այս առումով կարևորվում է ներգրավված գիտնականների թիվը, որը ևս գիտական որակի անհրաժեշտ պայմաններից է:

Նշվում է նաև ընտրված թեմաների հետ կապված խնդրի առկայություն՝ երկրի համար կարևոր և անկարևոր թեմաների ընտրությունը աղավաղված է:

Ինչ է պետք փոխել/բարելավել հետբուհական կրթության համակարգում ցանկալի արդյունքին հասնելու համար/մրցունակ գիտնականներ պատրաստելու համար:

Գիտությունների ազգային ակադեմիայի կարգավիճակի շուրջ փորձագետների կարծիքների շատ տարբեր են: Որոշ փորձագետներ նշում են, որ Ակադեմիան արժեք է և պետք է պահպանվեր այն ձևաչափով, որ կար, մյուսները, որ այն հնացած է, խորհրդային, անարդյունավետ և պետք է ընդհանրապես փակել: Ըստ առաջինների՝ Ակադեմիա ունենալը նշանակում է, որ գիտությունը և տեխնոլոգիաները ճանաչվում է որպես զարգացման ճանապարհ, հակառակ դեպքում երկրում կզարգանա ծառայություններ ոլորտը: Ակադեմիայի ինստիտուտները, միանալով համալսարաններին, վտանգ կա, որ դադարելու են գիտական լինելուց և վերածվելու են դասավանդման/ուսուցման միավորների: Մյուս կողմից, համալսարաններն ավելի մեծ ռեսուրսներ ունեն և այնտեղ աշխատավարձն ավելի բարձր է, դա կարող է ինստիտուտների համար ավելի լավ տարբերակ լինել: Ինչպես նաև սա կարող է օգնել, որ դասախոսները լինեն ոչ միայն դասավանդողներ, այլև հետազոտող գիտնականներ:

Գիտական աստիճանաշնորհման միաստիճան համակարգի վերաբերյալ փորձագետները հիմնականում արտահայտել են բացասական վերաբերմունք՝ համարելով, որ գիտական իրական արդյունք ստեղծվում է ավելի հասուն տարիքում: Նախկինում դոկտորների առկայությունը մոտիվացիա էր մյուսների համար ավելի բարձր դիրքերի ձգտելու գիտության ոլորտում: Գիտական 2-րդ աստիճանը նպաստում էր ոչ միայն որպես գիտնական զարգանալու, այլ նաև կադրեր պատրաստելու:

Հարցման արդյունքների վերլուծություն և ամփոփում

Հետբուհական կրթության արդյունավետության մասին հարցումն իրականացվել է ՀՀ տարբեր բուհերի և գիտական կազմակերպությունների հետբուհական կրթական ծրագրում ներգրավված (նոր օրենքով՝ բարձրագույն կրթության երրորդ մակարդակ)

հետազոտողների՝ ասպիրանտների և հայցորդների շրջանում: Հարցումն իրականացվել է առցանց 2025 թվականի նոյեմբեր ամսվա ընթացքում:

Հարցմանը մասնակցել են թվով 37 ասպիրանտ և հայցորդ, որոնցից 28-ը՝ կին (75,7%) և 9-ը՝ տղամարդ (24,3%): Հարցման մասնակիցների մեծամասնությունը՝ 43,2 %-ը 21-30 տարեկան է, 35,1%-ը 41-ից բարձր է, իսկ մնացած 21,6% -ը 31-40 տարիքային խմբում է: Հարցմանը մասնակցել են առկա և հեռակա, անվճար և վճարովի ասպիրանտուրայում սովորողներ և վճարովի հիմունքներով սովորող հայցորդներ, որոնք գտնվում են ուսումնառության 1-5 տարիներում: Այս առումով հարցմանը մասնակցել են բարձրագույն կրթության երրորդ մակարդակի կրթական ծրագրի իրականացման բոլոր ձևաչափերում և ուսումնառության բոլոր տարիներում ներգրավված հետազոտողներ:

Հարցվողների կեսը կատարում է հետազոտություն հումանիտար գիտությունների ոլորտում, մոտ մեկ երրորդը՝ հասարական գիտությունների, իսկ մնացածը՝ ԲՏՃՄ ոլորտում:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հարցվողների մեծամասնությունը (67,6%) կարծում է, որ հետբուհական կրթությունը Հայաստանում մասամբ է պատրաստում մրցունակ գիտնականներ: Մնացած կարծիքները հավասարապես (10,8%) բաշխվել են «այո, պատրաստում է», «ոչ, չի պատրաստում» և «դժվարանում եմ պատասխանել» տարբերակների միջև: Միաժամանակ հարցվողների մեծամասնությունը (62,2%) ցանկություն է հայտնել շարունակել գիտական գործունեությունը Հայաստանում ատենախոսության պաշտպանությունից հետո, իսկ 21,6 %-ը կարծում է, որ հնարավոր է ցանկանան շարունակել, եթե որոշ պայմաններ փոխվեն:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ հետբուհական կրթության արդունավետությանը խոչընդոտող հիմնական չորս խնդիրներն են.

Կրթաթոշակի անբավարար լինելը կամ բացակայությունը. հարցման մասնակիցների 54%-ը նշել է այն որպես հիմնական դժվարություն, որին բախվում են հետազոտողներն ասպիրանտուրայում կամ հայցորդություն իրականացնելիս:

Միջազգային համագործակցության բացակայությունը, որը գտնվում է երկրորդ տեղում՝ ձայների 37,8%-ով:

Կրթական ծրագրերի անարդյունավետությունը, որի հետ համաձայնել են հարցման մասնակիցների 27%-ը:

Եվ վերջապես գիտական ղեկավարության խնդիրը գտնվում է հետբուհական կրթության ոլորտում հիմնական դժվարությունների չորրորդ հորիզոնականում (մոտ 20%):

Ինչ վերաբերում է բուհերում կամ գիտական կենտրոններում համապատասխան ռեսուրսների հասանելիությանը, ապա հարցվողների ընդամենը 13,5%-ն է ընտրել այդ տարբերակը՝ որպես հիմնական դժվարություն, որին նրանք բախվում են որպես ասպիրանտ կամ հայցորդ:

Կրթական ծրագրերի անարդյունավետությունը հարցման մասնակիցների կապել են ոչ այնքան տրամադրվող դասընթացների որակի, որքան պահանջվող հաշվետվությունների և ատեստացիայի հետ: Հետբուհական կրթության շրջանակում առաջարկվող դասընթացների որակի վերաբերյալ հարցման մասնակիցների մեծամասնությունը գնահատել է որպես բավարար (37,8%) կամ միջին (27%): Դասընթացների մասին բարձր գնահատական տվել են միայն հարցվողների 10,8%-ը: Մնացածը դասընթացների որակը գնահատել են ցածր (10,8%) կամ շատ ցածր (13,5%): Դասընթացների որակի հետ կապված հարցման մասնակիցները հիմնականում նշել են դրանց հեռավար և ոչ ճկուն գրաֆիկով կազմակերպման հարցը, դրանց թիրախավորված կամ ասպիրանտների ու հայցորդների կարիքների հետ լավ կապված չլինելը, ապա նաև ծանրաբեռնվածությունը և բովանդակության որակի և վարող դասախոսների պատրաստվածության հետ կապված խնդիրներ:

Հաշվետվությունները և ատեստացիաները որպես վերահսկման գործիքներ, ըստ հարցման մասնակիցների 27%-ի՝ ընդհանրապես չեն նպաստում իրենց ուսումնառությանը և գիտական աշխատանքի կատարմանը: Մասնակիցների 18,9%-ը պատասխանել է, որ շատ քիչ են նպաստում և նույնքանն էլ մասնակից պատասխանել են, որ որոշ չափով են նպաստում:

Ինչ վերաբերում է գիտական ղեկավարության որակին, ապա հարցվողների զգալի մեծամասնությունը (62,2%) գոհ է գիտական ղեկավարության որակից և գնահատել է շատ բարձր: Հարցման մասնակիցների միայն 13,5%-ն է գնահատել բավարար, իսկ 16,2 %-ը՝ միջին: Ավելի ցածր գնահատականներ հարցման մասնակիցներից միայն մեկ հարցվող է տվել: Այսպիսով, ըստ էության կարելի է եզրակացնել, որ չնայած գիտական ղեկավարությունը նշվում է որպես հետբուհական կրթության հիմնական դժվարությունների շարքում, սակայն հարցման մասնակիցների մեծամասնությունը համարում է, որ դա կապված չէ գիտական ղեկավարության որակի հետ: Այն հարցին, թե գիտական ղեկավարի աշխատանքի հետ կապված ինչ խնդիր կարող են նշել, մասնակիցները հիմնականում նշել են ղեկավարների կազմակերպչական և հաղորդակցման հմտությունների հետ կապված խնդիրներ (հազվադեպ հանդիպումներ, ոչ հետևողականություն, հարաբերությունների էթիկա և այլն), ապա նաև գիտական ղեկավարի ընտրության և տվյալ թեման ղեկավարելու կամ չափանիշներին համապատասխանության հետ կապված խնդիրներ:

Հարցման մասնակիցների մեծամասնությունը (56,8%) տեղյակ չէ ներպետական գիտահետազոտական դրամաշնորհային համակարգի մասին, իսկ 16,2%-ը դժվարացել է պատասխանել, թե որքանով է համակարգը խթանող կամ օգտակար իրենց համար: Հարցվողների միայն 18,9%-ն է համարում, որ համակարգը օգտակար է ասպիրանտների և հայցորդների համար, մնացած 6,1%-ը համարում է այն քիչ կամ ոչ օգտակար:

Հիմնական խոչընդոտներ

Որպես հետբուհական կրթության հիմնական խոչընդոտներ հարցման մասնակիցները նշել են (թվարկման հերթականությունը հիմնված է նմանատիպ պատասխանների քանակով)՝

Հիմնականում ֆինանսական բնույթի հարցեր՝ կապված վարձավճարի, կրթաթոշակի անբավարարության (որի պատճառով ստիպված են աշխատել) հետ: Այս, ժամանակի սղությունը, այդ թվում, որ ստիպված են համատեղել հետազոտությունը աշխատանքի, ինչպես նաև դասընթացներին մասնակցության հետ:

Մոտիվացիայի, գիտության մեջ ապագա չտեսնելու խնդիրը:

Ժամանակակից կամ հայերեն գրականության և լաբորատոր կամ այլ ռեսուրսների պակասը:

Նպաստող միջավայրի բացակայությունը, այդ թվում՝ ամբիոնների ու համալսարանների պասիվությունը, տեղեկության վատ շրջանառությունը, ստույգեկտիվությունը և գիտական ղեկավարի ոչ բավարար աջակցությունը:

Միջազգային շտեմարաններում տպագրվելու դժվարությունը:

Բարելավման առաջարկներ

Հարցման մասնակիցները այն հարցին, թե առաջին հերթին ինչ պետք է փոխել կամ բարելավել հետբուհական կրթության համակարգում, պատասխանել են առաջնահերթություն տալով բարելավման հետևյալ ուղղություններին (թվարկման հերթականություն կապված է, թե որքան հաճախ է նշվել տվյալ ուղղությունը հարցման տարբեր մասնակիցների կողմից)՝

միջազգային համագործակցության, փորձի փոխանակման ակտիվացում,

գիտահետազոտական միջավայրի բարելավում (ապաքաղաքականացում, սուբյեկտիվության և կոռուպցիայի բացառում, հոգատարություն և աջակցություն հետազոտողին, թափանցիկություն հոդվածների տպագրման գործընթացում, ասպիրանտների միջև շփման ավելացում),

դասընթացների հետ կապված կազմակերպչական և բովանդակային հարցերի համապատասխանեցում հետազոտողների կարիքներին (ժամային գրաֆիկի և տևողության փոփոխություններ, որակյալ մասնագետների ներգրավում,

մասնագիտական դասընթացների ներառում, տարբեր ոլորտների հետազոտողների տարբեր դասընթացների առաջարկում և այլն), ֆինանսական բարեփոխումներ, այդ թվում՝ անվճար ուսումնառության տրամադրում, կրթաթոշակների բարձրացում և գիտնականի աշխատավարձի բարձրացում, ասպիրանտուրայի կամ հայցորդության ընդունելության և ղեկավարի ընտրության ընթացակարգի փոփոխություն՝ հիմնված հետազոտության նախագծի վրա: Հարցման մասնակիցների նշել են նաև թղթաբանության թեթևացման և ռոտացիոն համակարգի ներդրման, արտասահմանյան գրադարանների, տեղեկատվության հասանելիության մեծացման մասին:

Այսպիսով, ըստ հետազոտությանը մասնակցած փորձագետների կարծիքի՝ հետբուհական կրթության հիմնական խնդիրներն են.

Հետազոտողները չունեն բավարար պատրաստվածություն՝ անհրաժեշտ մակարդակի գիտելիքներ և հմտություններ (հատկապես օտար լեզուների), որակյալ գիտական աշխատանք կատարելու համար:

Գիտնականի աշխատանքը կամ սոցիալական կարգավիճակը գրավիչ չէ մարդկանց համար, որը պետության կողմից այս ուղղությամբ համապատասխան քայլերի բացակայության հետևանք է:

Հայցորդական ինստիտուտի վերացումը խոչընդոտում է գիտության զարգացմանը, քանի որ այն փակում է գործնական ոլորտից հետազոտողներ ներգրավելու հնարավորությունը և նվազեցնում է արդյունավետ գիտնականներ ունենալու շանսերը:

Գիտական աստիճանաշնորհման միաստիճան համակարգի ներդրումը բացասաբար է ազդելու գիտության զարգացման վրա, քանի որ այն նվազեցնում է գիտական աշխատանքներ կատարելու մոտիվացիան արդեն իսկ գիտական աստիճան ունեցողների համար, ինչպես նաև փորձը ցույց է տալիս, որ գիտական որակյալ աշխատանքներ հետազոտողները կատարում են ավելի հասուն տարիքում:

Ակադեմիայի և այնտեղ գործող ինստիտուտների կարգավիճակի փոփոխությունը խնդրահարույց է (ըստ փորձագետների մեծ մասի), քանի որ դա նշանակում է, որ պետությունն այլևս չի կապում իր զարգացումը գիտության և տեխնոլոգիաների զարգացման հետ, իսկ ինստիտուտների հետագա ճակատագիրը շատ անորոշ է:

Ինչ վերաբերում է ասպիրանտների և հայցորդների շրջանում արված հարցման արդյունքների՝ հետազոտողները համարում են, որ հետբուհական կրթության ոլորտում ամենամեծ խնդիրներից մեկը կրթաթոշակի անբավարար լինելն է կամ բացակայությունը, որի պատճառով հետազոտողները ստիպված են համատեղել գիտական գործունեությունը աշխատանքի հետ: Հարցմանը մասնակցած հետազոտողները նշում են, որ աշխատանքը, ինչպես նաև պարտադիր դասընթացներին մասնակցությունը, պահանջվող ատեստացիաներն ու

հաշվետվությունները միասին առաջացնում են ժամանակի սղության խնդիր: Հարցման մասնակիցները ևս նշում են, որ ունեն գիտությամբ զբաղվելու մոտիվացիայի, գիտության մեջ իրենց ապագան տեսնելու խնդիր: Մյուս կարևոր խնդիրը, որոնց բախվում են հետազոտողներից շատերը գիտական գործունեությամբ զբաղվելու համար նպաստող (արդար, թափանցիկ, աջակցող) միջավայրի բացակայությունն է համալսարաններում: Պետք է նշել, որ հարցմանը մասնակցած հետազոտողների միայն 18,9%-ն է համարում, որ ներպետական գիտահետազոտական դրամաշնորհային համակարգը օգտակար է ասպիրանտների և հայցորդների համար, սակայն մեծամասնությունն անգամ տեղյակ չէ համակարգի մասին (փորձագետները համարում են, որ այս համակարգը խթանում է և մեծ հաշվով նպաստում է գիտության զարգացմանը) : Հետբուհական կրթության բարելավումը ասպիրանտներն ու հայցորդները մեծամասամբ կապում են միջազգային համագործակցության, փորձի փոխանակման ակտիվացման հետ (միջազգային համագործակցության բացակայությունը նշվում է որպես երկրորդ ամենակարևոր խոչընդոտ՝ ձայների 37,8%-ով), ինչպես նաև գիտահետազոտական միջավայրի բարելավման հետ:

Այսպիսով, հիմք ընդունելով ուսումնասիրության շրջանակում իրականացված իրավական կարգավորումների համադրումը, վերջին 5 տարիներին ոլորտին հատկացված պետական միջոցների ծավալն ու աճի դինամիկան, ինչպես նաև փորձագիտական հարցազրույցների ու հարցման արդյունքները՝ հետևյալ առաջնահերթ խնդիրներն ու դրանց լուծման ուղիներն են առանձնացվել.

Ոլորտի բյուջետային հատկացումների ավելացում, անվճար կրթության հնարավորությունների ընդլայնում.

Չնայած այն հանգամանքին, որ վերջին 5 տարիներին կրթության բնագավառի պետական հատկացումներն էականորեն ավելացել են, բնագավառի ուղղությամբ իրականացվող պետական հատկացումների ծավալը շարունակում է զգալիորեն զիջել միջազգայնորեն ընդունված զարգացում ապահովող ցուցանիշներին: Վերջին շուրջ 10 տարվա ընթացքում միայն 2024 թվականի բնագավառի բյուջետային ցուցանիշն է, որ մոտեցել է ՀՆԱ-ի 3 տոկոսին, իսկ կրթության բյուջեի մասնաբաժինը պետական բյուջեում՝ 10 տոկոսի: Այս ցուցանիշը ապահովումը, մեծապես, լայնածավալ ենթակառուցվածքային (շինարարական) ծրագրերի արդյունք է, առաջին հերթին՝ 300 դպրոց և 500 մանկապարտեզ ծրագրի: 2024 թվականին այս ծրագրին հատկացվել է 92 մլրդ դրամ, որը բյուջեի 30 տոկոսն է: Կրթության բանագաբառի 2024 թվականի բյուջեի մեծությամբ 3-րդ ծրագիրը Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիրն է 35.7 մլրդ. ՀՀ դրամով: Սակայն նշված գումարի միայն $\frac{1}{3}$ -րդ մասն է, որ ուղղված է

հետազոտություններին, մնացածը առկա ենթակառուցվածքները սպասարկելու, նորերը ստեղծելու նպատակով է: Բյուջետային այս ծրագրի շրջանակում է նաև ֆինանսավորվում «Ակադեմիական քաղաք» նախագիծը, որին 2024 թվականին հատկացվել է շուրջ 1 մլրդ. ՀՀ դրամ: Այսքանով հանդերձ, բուհերի ուսանողների 83 տոկոսը սովորում է վճարովի համակարգում³⁰, իսկ անվճար սովորողների ամսական կրթաթոշակի չափը 2023-2024 թվականներին միջինում տատանվել 7000-8000 դրամ: Նույն ժամանակահատվածում անվճար սովորող և կրթաթոշակ ստացող ասպիրանտների ամսական կրթաթոշակի միջին չափի 61.000-71.000 դրամ է կազմել³¹:

Առաջարկ. կրթության բնագավառի պետական ֆինանսավորումը կարճաժամկետ հեռանկարում (մինչև 2030թ.) հասցնել ՀՆԱ-ի հարաբերակցությամբ առնվազն 4 տոկոսի, իսկ դրա մասնաբաժինը պետական բյուջեում՝ առնվազն 15 տոկոսի: Անհրաժեշտ ցուցանիշներին հասնելու հնարավորության ապահովումը չկապել բացառապես ենթակառուցվածքների պահպանման և նորերի ստեղծման միջոցով, այլ դրան զուգահեռ առաջնահերթության դարձնել ոլորտի անմիջական շահառուին հասնող ֆինանսական հատկացումներին ավելացումը: Նոր օրենքի պայմաններում բարձրագույն կրթության երրորդ մակարդակում (դոկտորանտուրայում) ուսուցումը կազմակերպել առավելապես անվճար (պետական կրթաթոշակային, դրամաշնորհային ծրագրերով) համակարգով: Դոկտորանտուրայում սովորողների կրթաթոշակային քաղաքականությունը համապատասխանեցնել տնտեսության համապատասխան ոլորտների միջին աշխատավարձի կամ այլ համադրելի չափումների հետ:

Բուհական համակարգի ֆորմալ ինքնավարությունից իրական ինքնավարության անցում.

Բուհական համակարգի ինքնակառավարման իրավունքը սահմանադրական նորմ է, որը տարբեր ձևերով արտահայտված է կրթության բնագավառի համապատասխան օրենքներում: Նոր օրենքում ինքնավարություն եզրույթն ու դրա հոլովված ձևերը հանդիպում են ավելի քան 20 անգամ: Միաժամանակ նոր օրենքում, ինչպես նաև մինչև 2030 թվականը Պետական զարգացման ծրագրում տեղ գտած այլ դրույթներն ու պահանջները մտահոգություն են առաջացնում, որ իրականացվող քաղաքականության արդյունքում առավելապես ֆորմալ և ավելի քիչ իրական ինքնավարություն է ապահովվելու: Այս մտահոգության ձևավորմանը նպաստում են նոր օրենքով սահմանված՝ բուհերի նկատմամբ պետական վերահսկողության աստիճանի ավելացումը, կազմակերպատիրական ձևի սահմանափակումը,

³⁰ Armenia Public Finance Review, Enhancing Fiscal Policy Efficiency, December, 2024, page 78.

³¹ https://budgets.am/wp-content/uploads/2024/07/Education_Simplified-Budget_EDRC-2.pdf

բուհերի՝ «պարտադրված» այդ թվում՝ լիցենզավորման նոր պահանջի միջոցով³², խոշորացումը, բուհի ռեկտորի հանդեպ ավելացված պահանջներն ու սահմանափակումները, Ակադեմիայի կարգավիճակի փոփոխությունները, վերջինիս կառավարման մարմիններում գործադիր իշխանության ազդեցության ավելացումը և վերջապես բուհական և գիտական համայնքը մեկ վայրում կենտրոնացնելուն ուղղված դրույթները³³: Վերը բերվածը փաստվում է նաև այս ուսումնասիրության շրջանակում քննարկված և վերլուծված փորձագիտական դիրքորոշումներով³⁴: Առաջարկ. առաջնահերթ վերանայել օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջը՝ հնավորություն տալով ավելի փոքր և կոնկրետ ուղղվածության բուհերի գոյությանը, ինչպես նաև հստակեցնել օրենքի 44-րդ հոդվածի 13-րդ մասի պահանջը՝ ուղղված Ակադեմիական քաղաքից դուրս բուհական ենթակառուցվածքների ստեղծման սահմանափակմանը: Կլաստերավորման միջոցով հանրային բուհերի ողջամիտ խոշորացման փորձարկումը իրականացնել մարզային բուհական ենթակառուցվածքների հիման վրա՝ բացառելով մարզերից, հատկապես՝ Շիրակ, Լոռի և Սյունիք, բուհական ենթակառուցվածքի դուրս բերումը:

Բուհական կրթության երրորդ մակարդակի արդյունավետության ապահովում և ձևավորված ավանդույթների պահպանում.

Բուհական (այդ թվում՝ հետբուհական) կրթության համակարգն անկասկած բարելավման, դրա արդյունավետության բարձրացման կարիք ունի: Զարգացման պետական ծրագրում՝ համակարգի հիմնախնդիրները բաժնում հետևյալ ձևակերպումն է տրված՝ «Ասպիրանտական կրթության կազմակերպումը և գիտական աստիճանաշնորհման պահանջները վերանայման կարիք ունեն, քանի որ դրանք այլևս արդիական չեն: Նախատեսվում է բարձրագույն և հետբուհական կրթության մակարդակները սահմանել եռաստիճան համակարգում՝ բակալավրի, մագիստրոսի և դոկտորի որակավորման աստիճաններով: Դոկտորի որակավորման աստիճանի շնորհումը հիմք է գիտական միաստիճան (PhD) համակարգի անցման: Այս փոփոխությամբ անհրաժեշտություն է առաջանում հստակեցնել և սահմանել բուհում բարձրագույն կրթության երրորդ մակարդակի չափանիշներն ու պայմանները...»: Զարգացման պետական ծրագրի ռազմավարական ուղղություններ բաժնում նշված է՝ «բարձրագույն կրթության երրորդ աստիճանի արդիականացում՝

³²«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 11-րդ մաս. «Բուհի լիցենզիայով սահմանվող ուսանողների սահմանային թիվը չի կարող պակաս լինել 4000-ից»:

³³«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 13-րդ մաս. «Ակադեմիական քաղաքի տարածքից դուրս արգելվում է բուհական նոր ենթակառուցվածքների ստեղծումը, եթե դա պայմանավորված չէ ենթակառուցվածքի բաղադրիչի կոնկրետ բնակլիմայական կամ աշխարհագրական առանձնահատկություններով: Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը լիցենզիա ունեցող բուհերը իրենց գործունեությունը կարող են շարունակել իրենց տրված լիցենզիայում նշված գործունեության վայրում: Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կրթական ենթակառուցվածքների ընդլայնում հնարավոր է միայն Կառավարության հաստատած ակադեմիական քաղաքի հայեցակարգի հետ համապատասխանության պարագայում, որի վերաբերյալ եզրակացությունը տալիս է Լիազոր մարմինը՝ «Ակադեմիական քաղաք» հիմնադրամի կարծիքի հիման վրա»:

³⁴<https://evnreport.com/arm/law-society-arm/the-law-on-higher-education-and-sciences/>

անցում գիտական միաստիճան (PhD) համակարգի և դոկտորի որակավորման աստիճանի, գիտահետազոտական կրթության և գիտական աստիճանաշնորհման չափանիշների ու պայմանների հստակեցում՝ համապատասխանեցնելով միջազգային չափանիշներին»։ Սակայն նույն Ջարգացման պետական ծրագրում, ինչպես նաև որևէ այլ տեղ չենք գտնում առարկայական և փաստահեն հիմնավորում թե ինչու է հենց գիտական միաստիճան (PhD) համակարգը համարվում ոլորտի զարգացման ճիշտ ճանապարհը։ Հայաստանի Հանրապետությունը ժառանգել է գիտական աստիճանաշնորհման երկաստիճան համակարգ, որտեղ առաջինից երկրորդ աստիճանի անցումն էականորեն ավելի լուրջ գիտական աշխատանք և ներդրում է ենթադրել, որն էլ ապահովել գիտական ավելի նշանակալի արդյունք։ Միաստիճան համակարգի ներդրումով գիտական աստիճան ունեցողները համարվում են գիտության դոկտորներ (PhD)-ներ, ինչն առերևույթ խախտում է նախկին համակարգով գիտության դոկտորի աստիճան ունեցողների իրավունքները։ Առաջարկ. բոլոր շահագրգիռ կողմերի հետ իրական բովանդակային քննարկում իրականացնել և դիտարկել մայրցամաքային Եվրոպայում առավել տարածված գիտական աստիճանաշնորհման երկաստիճան համակարգի՝ PhD և Doctor of Habilitation (Dr.habil.) ներդրման հնարավորությունը։ Այս տարբերակը հնարավորություն ունի ապահովել ոլորտի անհրաժեշտ զարգացումը՝ միաժամանակ չխաթարելով ձևավորված պատմական ավանդույթը, պաշտպանել մինչև նոր օրենքի ընդունումը՝ գիտության դոկտորի աստիճան ունեցողների իրավունքները։ Զուգահեռաբար ապահովել իրավական հիմքեր հայցորդության ինստիտուտի նմանությամբ որևէ համակարգի ներդրման ուղղությամբ, օրինակ՝ հեռակա դոկտորանտուրայի միջոցով։

Հավելված

Վերլուծություն

2020-2025 թվականների բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության պետական բյուջետային ծրագրերի

Նախաբան

2020–2025 թվականները Հայաստանի Հանրապետության համար բնութագրվել են պետական բյուջեի զգալի ընդլայնմամբ: Այս ժամանակահատվածում պետական բյուջեն գրեթե կրկնապատկվել է՝ 1.856 տրլն. ՀՀ դրամից հասնելով 3.442 տրլն. ՀՀ դրամի: Սակայն բյուջեի աճին զուգահեռ բյուջետային դեֆիցիտը մեծացել է ավելի արագ տեմպերով՝ 160.6 մլրդ. ՀՀ դրամից հասնելով 604.0 մլրդ. ՀՀ դրամի, իսկ դրա կշիռը բյուջեում աճել է 8.6%-ից մինչև շուրջ 17.5%: Բյուջետային դեֆիցիտի այս տեմպերով ավելացումը երկարաժամկետ հեռանկարում կարող է հանգեցնել ֆինանսական ռիսկերի: Նույն ժամանակահատվածում կրթության տարեկան պլանային բյուջեն աճել է 157.7 մլրդ. ՀՀ դրամից մինչև 309.6 մլրդ. ՀՀ դրամ, իսկ ճշտված պլանը՝ 154.6 մլրդ. ՀՀ դրամից մինչև 337.7 մլրդ. ՀՀ դրամ: Ոլորտի կշիռը ԿԳՄՆ բյուջեում աճել է 86.3%-ից մինչև 88.5% (2025 թվականի 9 ամիսների տվյալներով), իսկ պետական բյուջեում՝ 8.33%-ից մինչև առավելագույնը 10.01% (2024թ.), ապա 2025 թվականին փոքր ինչ նվազելով՝ կազմել է 9.81%: Միաժամանակ ՀՆԱ-

ում կրթության վրա իրականացվող պետական ծախսի մասնաբաժինը միջինում կազմել է շուրջ 2.3–2.4%, և միայն 2024 թվականին այն հասել է 3.1%-ի: Բյուջեի կատարողականը կայուն դինամիկայով չի ընթացել՝ որոշ տարիներին ապահովվելով կատարողականի բարձր մակարդակ, սակայն որոշ դեպքերում կատվել են լուրջ թերակատարումներ: **Բյուջեի այդօրինակ էական թերակատարում է գրնացվել 2024 թվականին հատկապես «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի մասով**, որը վճռորոշ դեր ունի կրթական ենթակառուցվածքների զարգացման գործում: **Բյուջեի այդօրինակ էական թերակատարում է գրնացվել 2024 թվականին հատկապես «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում» ծրագրի մասով**, որը վճռորոշ դեր ունի կրթական ենթակառուցվածքների զարգացման գործում: 2024 թվականին տվյալ ծրագրի տարեկան պլանային բյուջեն կազմել է 92,861 մլրդ. ՀՀ դրամ, սակայն փաստացի կատարվել է միայն 29,971 մլրդ. ՀՀ դրամը, ինչի արդյունքում կատարողականը կազմել է ընդամենը **35.3%**: Այս ցուցանիշը էականորեն նվազեցրել է տվյալ տարվա կրթության ոլորտի ընդհանուր

կատարողականը, որը կազմել է 80.3%: Միևնույն ժամանակ, 2020 թվականը առանձնացել է COVID-19 համավարակի ազդեցությամբ: Մասնավորապես, ՀՀ կրթության բյուջեով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության» ծրագրի համար նախատեսված ավելի քան 12.6 մլրդ. ՀՀ դրամը կրճատվել է 1.2 մլրդ. դրամով, ինչի հետևանքով ճշտված բյուջեն կազմել է 11.4 մլրդ. ՀՀ դրամ: Չնայած դրան՝ փաստացի օգտագործվել է 10.8 մլրդ. ՀՀ դրամ՝ ապահովելով 94.8% կատարողական: 2021 թվականին կրթության փաստացի ծախսերն աճել են 4.31%-ով՝ նախորդ տարվա համեմատ: 2022 թվականին աճը շարունակվել է՝ կազմելով 12.70%, իսկ 2023-ին՝ 7.53%: 2024 թվականին գրանցվել է զգալի աճ՝ 38.23%, մինչդեռ 2025

Տարի	Պետ. բյուջե/տրվն. դրամ	Բյուջեի դեֆիցիտ/ մլրդ. դրամ
2020	1,856	160,6
2021	1,851	341,4
2022	2,184	236,2
2023	2,591	288,9
2024	3,207	482,9
2025	3,442	604,0

թվականին (9 ամսվա տվյալներով) փաստացի ծախսերը կազմում են -18.32% նախորդ տարվա նկատմամբ: Այսպիսով, 2020–2025 թվականների ընթացքում թե՛ պետական, թե՛ կրթության բյուջեները զգալիորեն աճել են: Պետական բյուջեի ընդլայնումը ուղեկցվել է դեֆիցիտի աճով, իսկ կրթության ոլորտում՝ հատկապես ենթակառուցվածքային ծրագրերի դեպքում, նկատվել են լուրջ թերակատարումներ և կատարողականի տատանումներ:

ՀՀ պետական բյուջե և դեֆիցիտ (2020–2025թթ.)³⁵

Համեմատությունը կատարվել է երկու առանցքային ցուցանիշների հիման վրա՝ **պետական բյուջեի ընդհանուր ծավալ** և **բյուջեի դեֆիցիտ**, ինչպես նաև դիտարկվել է դեֆիցիտի հարաբերակցությունը բյուջեի նկատմամբ՝ ֆինանսական կայունության տեսանկյունից: Բուն վերլուծությունը հիմնվել է հետևալ հիմնական ցուցանիշների վրա՝

³⁵2020/<https://www.arlis.am/hy/acts/137645>, 2021/<https://www.arlis.am/hy/acts/148551>, 2022/<https://www.arlis.am/hy/acts/158708>, 2023/<https://www.arlis.am/hy/acts/176600>, 2024/<https://www.arlis.am/hy/acts/189086>, 2025/<https://www.arlis.am/hy/acts/200713>

1. Պլանային բյուջե,
2. Տարեկան ճշտված պլան
3. Փաստացի կատարված ծախս,
4. Կատարողական (%),
5. Կշիռը ԿԳՄՄՆ բյուջում,
6. Կշիռը պետական բյուջեում,
7. Կշիռը ՀՆԱ-ում:


2020–2025թթ.ընթացքում ՀՀ պետական բյուջեն անցել է արագ և անընդհատ ընդլայնման ուղի: Եթե 2020թ.-ին բյուջեն կազմել է 1.856 տրլն. ՀՀ դրամ, ապա 2025թ.-ին այն արդեն հասել է 3.442 տրլն. ՀՀ դրամի: Այսինքն՝ հինգ տարվա ընթացքում բյուջեն գրեթե կրկնապատկվել է՝ ավելանալով 1.586 տրլն. ՀՀ դրամով կամ շուրջ 85%-ով: Սա վկայում է պետության ֆինանսական հնարավորությունների էական ընդլայնման մասին: Սակայն նույն ժամանակահատվածում բյուջեի դեֆիցիտը աճել է շատ ավելի արագ տեմպերով: 2020թ.-ին դեֆիցիտը կազմել է 160.6 մլրդ. ՀՀ դրամ, իսկ 2025թ.-ին այն հասել է 604.0 մլրդ. ՀՀ դրամի: Աճը կազմել է 443.4 մլրդ. ՀՀ դրամ, այսինքն՝ դեֆիցիտը աճել է ավելի քան 3.7 անգամ (մոտ 276%): Այս անհամաչափությունը ցույց է տալիս, որ բյուջեի ծավալների ընդլայնման մեջ էական դեր ունի պարտքային կամ դեֆիցիտային ֆինանսավորմը: 2020–2021թթ. բյուջեի ծավալը էականորեն չի փոխվել՝ գրանցելով փոքր նվազում (1.856 տրլն. ՀՀ դրամից մինչև 1.851 տրլն. ՀՀ դրամ), սակայն դեֆիցիտը կտրուկ աճել է՝ (160.6 մլրդ. ՀՀ դրամից մինչև 341.4 մլրդ. ՀՀ դրամ): Սա ցույց է տալիս, որ նույնիսկ առանց էական բյուջետային ընդլայնման՝ պետությունը ստիպված է եղել ավելացնել դեֆիցիտը՝ հավանաբար ճգնաժամային կամ արտակարգ ծախսերի պատճառով: 2022թ.-ից սկսած բյուջեն մտել է արագ աճի փուլ՝ հասնելով 2.184 տրլն. ՀՀ դրամի, սակայն դեֆիցիտի ցուցանիշը ևս մնացել է բարձր՝ 236.2 մլրդ. ՀՀ դրամ: 2023–2024թթ. բյուջեն շարունակում է աճել, հասնելով 2023 թվականին՝ 2.591 տրլն. ՀՀ դրամի, իսկ 2024 թվականին՝ 3.207 տրլն. ՀՀ դրամի: Սակայն դեֆիցիտը նույնպես մեծանում է՝ 288.9 մլրդ. ՀՀ դրամից աճելով մինչև 482.9 մլրդ. ՀՀ դրամի: Այստեղ օրինաչափությունը ակնհայտ է՝ բյուջեի աճը համակարգված ուղեկցվում է դեֆիցիտի մեծացմամբ: Այս իմաստով 2025թ.-ը առանձնանում է որպես բյուջեի ամենամեծ ծավալի և միաժամանակ ամենամեծ դեֆիցիտի առկայություն տարի:

- Պետական բյուջե՝ 3.442 տրլն. ՀՀ դրամ
- Դեֆիցիտ՝ 604.0 մլրդ. ՀՀ դրամ

Այս երկու ցուցանիշների համադրությունը հետևյալ օրինաչափությունն է սույց տալիս. մի կողմից՝ պետությունը տնօրինում է զգալիորեն ավելի մեծ ֆինանսական ռեսուրսներ, մյուս կողմից՝ այդ ռեսուրսների զգալի մասը ձևավորվում է դեֆիցիտի

հաշվին՝ ավելացնելով ֆինանսական պարտավորությունները: Եթե 2020թ.-ին դեֆիցիտը կազմել է բյուջեի մոտ **8.6%-ը**, ապա 2025թ.-ին այն արդեն կազմում է մոտ **17.5%**: Այսինքն՝ դեֆիցիտի կշիռը բյուջեում **ավելի քան կրկնապատկվել է**, ինչը վկայում է ֆինանսական հավանական ռիսկերի աճի մասին:

Ցուցանիշ	2020	2025	Փոփոխություն
Պետ. բյուջե	1.856 տրլն.	3.442 տրլն.	+1.586 տրլն. (+85%)
Դեֆիցիտ	160.6 մլրդ.	604.0 մլրդ.	+443.4 մլրդ. (+276%)
Դեֆիցիտ/բյուջե	8.6%	17.5%	+8.9 %



ՀՀ կրթության պետական բյուջեի 2020-2025թթ.

ամփոփ տվյալներ³⁶

³⁶ ՀՀ Ֆինանսների նախարարություն, պետական բյուջեի տարեկան հաշվետվություններ (2020–2025 թթ.), https://minfin.am/hy/page/hy_hashvetvutyunner/, ՀՆԱ-ի և պետ.բյուջեի կշռի հաշվարկը իրականացված է բյուջետային մասնագետի կողմից: 2025թ-ի ցուցանիշները ներկայացված են աջաին ինն ամսիսների կտրվածքով, քանի որ սույն վերլուծության կազմման ժամանակ տվյալ տարվա երրորդ եռամսյակի կատարողականի տվյալները դեռևս հասանելի չեն եղել:

Տարի	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի կատարված	Կատարողական %
2020	157,655,388,500	154,636,247,900	147,550,460,900	95.4
2021	157,671,965,800	157,298,675,300	153,915,072,400	97.8
2022	202,703,697,300	177,967,973,300	173,449,436,000	97.4
2023	223,331,774,700	199,593,238,900	186,511,566,200	93.4
2024	318,256,531,800	320,951,316,400	257,812,551,100	80.3
2025	309,586,810,400	337,686,978,800	210,593,233,400	62.3

ՀՀ-ում 2025 թվականի առաջին 9 ամիսների պետական բյուջեի ծախսերի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իրականացվող ծրագրերի համար տարեկան պլանով հատկացվել է՝ **362.6 մլրդ. ՀՀ դրամ**, իսկ փաստացի ծախսերը կազմել են **237.7 մլրդ. ՀՀ դրամ**: Մինչդեռ նույն թվականի բյուջեի կրթության տարեկան պլանայինը կազմել է **309,6 մլրդ. ՀՀ դրամ**, որից փաստացի կատարվել **210,6 մլրդ. ՀՀ դրամ** կամ **62.3 %**:

2020–2025թթ.ընթացքում կրթության ոլորտի պլանային բյուջեն գրանցել է զգալի աճ. 2020թ.-ի կրթության պլանային բյուջեն **157.7 մլրդ. ՀՀ դրամ**ից 2025թ.-ին հասել է **309,6 մլրդ. ՀՀ դրամ**ի Այսինքն՝ հինգ տարվա ընթացքում պլանային բյուջեն ավելացել է **151.9 մլրդ. ՀՀ դրամ**ով կամ **շուրջ 96%-ով**: Եթե 2020թ.-ին փաստացի կատարվել է **147.5 մլրդ. ՀՀ դրամ**, ապա 2024թ.-ին այն հասել է **257.8 մլրդ. ՀՀ դրամ**ի, իսկ 2025թ.-ին (առաջին 9 ամսվա տվյալով) կազմել է **210.6 մլրդ. ՀՀ դրամ**: 2025 թվականին կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներում պետական քաղաքականության իրականացումն ապահովվել է **24 բյուջետային ծրագրերի միջոցով**, որից բուն կրթության ծրագրերը **14-ն** են, փաստացի՝ **257,8 մլրդ. ՀՀ դրամ** բյուջեով:

2025թ առաջին 9 ամիսների տվյալներով ֆինանսավորման ծավալով առաջատարը «Հանրակրթության ծրագիրն» է, որի պլանային բյուջեն կազմում է **132.8 մլրդ. ՀՀ դրամ**, իսկ փաստացի կատարվել՝ **96,7 մլրդ. ՀՀ դրամ** կամ **72.9%**: Երկրորդ խոշոր ուղղությունը «Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում և բարելավում» ծրագիրն է՝ պլանային բյուջեն կազմում է՝ **84.4 մլրդ. ՀՀ դրամ**, տարեկան ճշտված պլանով կազմել է՝ **109,7 մլրդ. ՀՀ դրամ**,

փաստացի կատարվել՝ 54,9 մլրդ. դրամ կամ 50.0 %: Երրորդ տեղում է «Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ» ծրագիրն է՝ պլանային 3,9 մլրդ. ՀՀ դրամ, ճշտված պլանայինով՝ 30,6 մլրդ. ՀՀ դրամ, փաստացի կատարվել՝ 18,5 մլրդ. ՀՀ դրամը կամ 60.6%: Միջին ֆինանսավորման խմբում են գտնվում կրթության որակի ապահովման, մասնագիտական կրթության և ուսուցման, ինչպես նաև բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրերը:

2025թ. կրթության բնագավառի բյուջետային ծրագրերի էական առանձնահատկությունը, հատկապես բարձրագույն կրթության գիտության ոլորտի պետական ֆինանսավորման տեսանկյունից, հանդիսանում է «Ակադեմիական քաղաք» նախագծի՝ որպես առանձին բյուջետային ծրագրի ներառումը կրթության բյուջեի կառուցվածքում:

2023 թվականին «Ակադեմիական քաղաք» նախագիծը ֆինանսավորվել է որպես «Գիտական կենտրոնների վերանորոգում» միջոցառման մաս՝ «Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ» ծրագրի շրջանակում: Ընդհանուր միջոցառմանը տարեկան պլանով հատկացված է եղել **940.0 մլն. ՀՀ դրամ**, որից «Ակադեմիական քաղաքին»՝ **35.015 մլն. ՀՀ դրամ**³⁷: Սակայն միջոցառման իրականացումը զգալիորեն թերակատարվել է. փաստացի ծախսվել է ընդամենը **86,208.7 մլն. ՀՀ դրամ**, ինչը կազմում է նախատեսված գումարի շուրջ 9.2%³⁸: 2024 թվականին նույն միջոցառման համար կրկին նախատեսվել է **940.0 մլն. ՀՀ դրամ**, սակայն ճշտված պլանով հատկացվել է **473.875 մլն. ՀՀ դրամ**: Այս անգամ իրավիճակն էապես փոխվել է, միջոցառման իրականացումն եղել է գրեթե ամբողջական՝ ապահովելով 99.5% կատարողական: Այնուամենայնիվ, 2025 թվականին տեղի է ունեցել բյուջետավորման իմաստով էական փոփոխություն, «Ակադեմիական քաղաք»-ը դարձել է առանձին ծրագիր, որի համար հատկացվել է պլանային բյուջեով՝ **2.1 մլրդ. ՀՀ դրամ**, ինչը զգալի աճ է նախորդ տարիների համեմատ, որից փաստացի կատարվել **636,222.4 մլրդ. ՀՀ դրամ**: 2025 թվականի առաջին 9 ամիսների ընթացքում կատարողականը կազմել է 30.1%:


³⁷<https://www.src.am/storage/reports/xjDR5Report2023-05031993-vh.pdf>

³⁸https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2023t_tarekan

Ստորև աղյուսակում ներկայացված է ՀՀ կրթության ոլորտի բյուջետային ծրագրերը 2025թ. տարեկան պլանով, ճշտված պլանով, փաստացի կատարման, ինչպես նաև կատարողականի տոկոսային տվյալներով.

	Տարեկան պլան	Տարեկան ճշտված պլան	Փաստացի կատարում	Կատարողական %
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	362,664,415.9	390,065,595.5	237,744,583.4	60.9
Կրթական ոլորտի ծրագրերի անվանումը՝				
1111-Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր	14,164,280.6	14,330,664.0	8,759,563.3	61.1
1130-Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառի պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	1,911,263.8	1,928,955.8	1,293,552.4	67.1
1146-Հանրակրթության ծրագիր	132,760,843.3	132,760,186.3	96,747,954.0	72.9
1148-Արտադպրոցական դաստիարակության ծրագիր	3,940,682.2	3,980,983.2	2,716,101.1	68.2
1162-Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր	33,912,203.5	30,604,697.3	18,543,314.9	60.6
1183-Ապահով դպրոց	791,027.3	2,127,561.6	1,007,151.2	47.3
1189-Դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակի բարձրացման ծրագիր	10,704,812.7	13,931,065.3	9,685,421.9	69.5
1192- Կրթության որակի ապահովում	15,757,402.3	17,005,696.3	10,653,875.1	62.6

1193- Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում	3,803,996.8	3,803,996.8	2,427,929.0	63.8
1215- Կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում միջազգային և սփյուռքի հետ համագործակցության զարգացում	398,301.2	409,175.2	378,343.2	92.5
1227- Կրթության ոլորտում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրում	876,696.1	923,571.1	699,676.1	75.8
1236- Հանրակրթական և նախադպրոցական հաստատությունների հիմնում, կառուցում, բարելավում	84,420,175.9	109,735,301.2	54,890,011.4	50.0
1238- Նախադպրոցական կրթություն	4,031,048.4	4,031,048.4	2,154,117.4	53.4
1240- Ակադեմիական քաղաքի ստեղծում	2,114,076.3	2,114,076.3	636,222.4	30.1



2020-2025թթ.³⁹կրթության բնագավառի կշիռը ԿԳՄՍՆ և պետական բյուջեում, նրա մասնաբաժինը ՀՆԱ-ում, ինչպես նաև աճը Նախորդ տարվա համեմատ, ամփոփ ներկայացված է ստորև: Տվյալների ամփոփման և վերլուծության համար հիմք է ծառայել կրթության բյուջեի փաստացի կատարված արժեքները:

Տարի	Կշիռը ԿԳՄՍՆ բյուջեում	Կշիռը ՀՆԱ-ում	Նախորդ տարվա համեմատաճը	Կշիռը պետ. բյուջեում
2020	86.3%	2,3%	10.3%	8.33%
2021	88.0%	2,2%	4.31%	8.50%
2022	85.6%	2,0%	12.70%	8.15%
2023	85.2%	1,9%	7.53%	7.70%

³⁹2025թ. տվյալները ներկայացված են առաջին 9 ամիսների կտրվածքով:

2024	90.0%	3,1%	38.23%	10.01%
2025	88.5%	1.9%	-18.32%	9.81%

Կշիռը ԿԳՄՍՆ բյուջեում

2020 թվականին կրթության ծրագրերի կշիռը ԿԳՄՍՆ ընդհանուր բյուջեում կազմել է **86.3%**: 2021 թվականին այն աճել է՝ հասնելով **88.0%**: 2022–2023 թվականներին նկատվել է որոշակի նվազում՝ համապատասխանաբար **85.6%** և **85.2%**, ինչը պայմանավորված էր գիտության, մշակույթի և այլ ենթաոլորտների ֆինանսավորման համեմատական աճով: 2024 թվականին արձանագրվել է էական աճ՝ մինչև **90.0%**, ինչը հինգ տարվա ընթացքում ամենաբարձր ցուցանիշն է: Սա վկայում է, որ նախարարության ծախսերի կառուցվածքում կրթությունը ստացել է գերակշռող դիրք: 2025 թվականի 9 ամիսների տվյալներով ցուցանիշը կազմել է **88.5%**, այսինքն՝ որոշակի նվազում 2024 թվականի համեմատ, սակայն շարունակում է մնալ բարձր մակարդակի վրա:

Կշիռը ՀՆԱ-ում


Կրթության ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ում 2020 թվականին կազմել է **2.3%**: 2021 թվականին այն նվազել է մինչև **2.2%**, 2022 թվականին՝ մինչև **2.0%**, իսկ 2023 թվականին՝ **1.9%**: 2024 թվականին իրավիճակը էապես փոխվել է. կրթության կշիռը ՀՆԱ-ում հասել է **3.1%**, ինչը դիտարկվող ժամանակահատվածի ամենաբարձր ցուցանիշն է: 2025 թվականի 9 ամիսների հաշվարկով կրթության փաստացի ծախսերի կշիռը ՀՆԱ-ում կազմել է մոտ **1.9%**:

Աճը նախորդ տարվա համեմատ

Կրթության փաստացի ծախսերի աճը 2020 թվականին կազմել է **10.3%**, 2021 թվականին՝ **4.31%**, 2022 թվականին արձանագրվել է աճ՝ **12.70%**, 2023 թվականին՝ **7.53%**: 2024 թվականին գրանցվել է զգալի՝ **38.23%** աճ, որը պայմանավորված էր հիմնականում խոշոր ենթակառուցվածքային ծրագրերով, մասնավորապես հանրակրթական հաստատությունների կառուցման և բարելավման ծրագրերով: Սակայն 2025 թվականի 9 ամիսների տվյալներով արձանագրվել է - **18.32%** նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ: 2025 թվականին արձանագրված **-18.32%** **փոփոխությունը** նախորդ տարվա նկատմամբ պայմանավորված է նրանով, որ համեմատության համար օգտագործվել են **2025 թվականի առաջին 9 ամիսների փաստացի ծախսերը**, մինչդեռ 2024 թվականի ցուցանիշը ներկայացված է ամբողջ տարվա կտրվածքով:

Կշիռը պետական բյուջեում

2020 թվականին կրթության կշիռը պետական բյուջեում կազմել է **8.33%**: 2021 թվականին այն աճել է մինչև **8.50%**: 2022–2023 թվականներին արձանագրվել է նվազում՝ համապատասխանաբար **8.15%** և **7.70%**: 2024 թվականին արձանագրվել է կտրուկ աճ՝ մինչև **10.01%**: 2025 թվականի 9 ամիսների տվյալներով ցուցանիշը կազմել է **9.81%**: Թեև այն փոքր-ինչ զիջում է 2024 թվականի մակարդակին, սակայն շարունակում է գերազանցել 2020–2023 թվականների միջին ցուցանիշները:



Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիր

Բյուջետային ծրագրի նպատակը⁴⁰

Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության համար մատչելի, որակյալ և մրցունակ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ապահովումն է: Դա հնարավորություն է տալիս պատրաստել մասնագետների, որոնք համապատասխանում են գիտելիքների տնտեսության և գիտության

⁴⁰https://minfin.am/hy/page/petakan_byuje_2020t_nakhagits

զարգացման արդի պահանջներին ապահովելով բարձրագույն և հետբուհական կրթություն ստացողների մրցունակությունը միջազգային շուկայում:

Վերջնական արդյունքի նկարագրությունը

Ծրագրի շրջանակներում պատրաստվում են բարձրագույն և հետբուհական մասնագիտական որակավորում ունեցող մասնագետներ, որոնք բավարարում են գիտության, տեխնոլոգիաների և տնտեսության արդի պահանջներին, իսկ դրանց ազդեցությունը զգացվում է գիտակրթական և հետազոտական ոլորտներում:

2025 թվականի ինն ամիսների ընթացքում **բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագիրը իրականացվել է 14 բյուջետային միջոցառումների միջոցով**, որոնց կատարման մակարդակները տարբեր են՝ կախված միջոցառումների բնույթից և իրականացման մեխանիզմներից:

2024 թվականին ծրագրի պլանային բյուջեն կազմել է **14.6 մլրդ. ՀՀ դրամ**, փաստացի իրականացվել է **13.2 մլրդ. ՀՀ դրամ**, ապահովելով **98% կատարողական**: 2025 թվականի 9 ամիսների ընթացքում պլանային բյուջեն կազմել է **14.1 մլրդ. ՀՀ դրամ**, փաստացի ծախսվել է **8.7 մլրդ. ՀՀ դրամ**, ինչը կազմում է **61.1% կատարողական**:

Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ծրագրի միջոցառումներ 2025թ. (9 ամիս)


ԾՐԱԳՐԻ ԿՈԴ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ	ՓԱՍՏԱՑԻ	ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ (%)
1111-11001	Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ	43,113.5	30,179.5	70.0
1111-11003	Բարձրագույն կրթության որակի ապահովման ծառայություններ	59,989.5	44,992.1	75.0
1111-11007	Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի անդամակցությամբ պայմանավորված բարեփոխումներ	45,010.7	7,276.8	16.2
1111-12001	Բարձրագույն կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ	1,120,800.0	630,875.7	56.3

1111-12002	Հետբուհական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ (բուհեր)	532,188.0	334,734.0	62.9
1111-12003	Ասպիրանտական կրթաթոշակներ գիտական հաստատություններում	89,040.0	31,061.3	34.9
1111-12004	Ուսանողական նպաստների տրամադրում (բարձրագույն կրթություն)	10,481,397.3	6,701,224.8	63.9
1111-12005	Նպաստների տրամադրում հետբուհական կրթություն (բուհեր)	499,228.0	305,266.6	61.1
1111-12006	Նպաստների տրամադրում հետբուհական կրթություն (գիտակրթական)	35,586.2	11,288.7	31.7
1111-12007	Երևանում բարձրագույն կրթության հասանելիության ապահովում մարզաբնակ ուսանողներին	35,045.5	26,284.2	75.0
1111-12008	Ուսումնական վարկերի տոկոսավճարների մասնակի փոխհատուցում	66,300.0	49,725.0	75.0
1111-12011	ԼՂ-ից բռնի տեղահանված ուսանողներին ուսման վարձի փոխհատուցում (կրթաթոշակ)	440,237.5	176,488.8	40.1
1111-12012	ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների ուսանողների ուսման վարձի փոխհատուցում	254,235.2	176,936.2	69.6
1111-32001	Բարձրագույն ուսումնական հաստատությունների և «Զեյթուն» ուսանողական ավան» հիմնադրամի շենքային պայմանների բարելավում	462,109.2	233,229.6	37.3


Վերլուծության շրջանակում ուսումնասիրվել են հետևյալ հիմնական միջոցառումները՝

- **1111-12001** – Բարձրագույն մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ
- **1111-12002** – Հետբուհական մասնագիտական կրթություն ստացող ուսանողների կրթաթոշակ
- **1111-12003** – Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակներ
- **1111-12005** – Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում բուհական հաստատություններում
- **1111-12006** – Հետբուհական մասնագիտական կրթության գծով նպաստների տրամադրում գիտակրթական հաստատություններում

Միջոցառումների բյուջեների և դրանց կատարողականի ցուցանիշները ներկայացված են ստորև պատկերներում՝ համապատասխանաբար 2020-2025թթ. հաստատված պլանային հատկացումները⁴¹ և դրանց կատարողականը տոկոսային հարաբերակցությամբ.



⁴¹Միջոցառումների բյուջեները ներկայացված են միլիոն ՀՀ դրամով, բացառությամբ 2024 և 2025 թթ. 12001-ի տվյալները, որոնք ներկայացված են միլիարդով:



2020–2025 թվականների ընթացքում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող պետական ծրագրերը ֆինանսավորվել են համեմատաբար կայուն և աճող ծավալներով: Տարեկան պլանային բյուջեն 2020–2025 թթ. տատանվել է **11.8–14.1 մլրդ. ՀՀ դրամի** միջակայքում: 2024 թվականին կրթաթոշակների և նպաստների բոլոր հիմնական միջոցառումների կատարողականը գերազանցել է **95%**: 2025 թվականի 9 ամիսների ընթացքում արձանագրվել է **կատարողական՝ 31.7–62.9% միջակայքում**:

Միջոցառումների վերլուծություն

12001 – Բարձրագույն մասնագիտական կրթության ուսանողների կրթաթոշակ

Այս միջոցառումը նպատակ ունի ապահովել սոցիալապես խոցելի և բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների կրթական հասանելիությունը:

2020–2024 թվականներին այն իրականացվել է կատարողականով (75–96%): 2020 թվականին միջոցառման պլանային բյուջեն կազմել է **916.4 մլն. ՀՀ դրամ**, իսկ փաստացի օգտագործումը՝ **666.5 մլն. ՀՀ դրամ**, ինչի արդյունքում արձանագրվել է **75.2% կատարողական**: Շեղումը հիմնականում պայմանավորված է եղել **COVID-19 համավարակով և արտակարգ դրությամբ**, որի հետևանքով փաստացի կրթաթոշակառուների թիվը կազմել է **8340 ուսանող՝ կանխատեսված 10580-ի դիմաց**, ինչը էականորեն ազդել է ընդհանուր կատարողականի վրա: 2024 թվականին միջոցառման պլանային բյուջեն կազմել է **1,062.0 մլրդ. ՀՀ դրամ**, ապահովվելով **96.1% կատարողական**: Արդյունքում կրթաթոշակ ստացողների միջին տարեկան թիվը կազմել է **7,024 ուսանող**, ինչը համապատասխանում է պլանավորված ցուցանիշներին: 2025 թվականի 9 ամիսների ընթացքում միջոցառման պլանային բյուջեն կազմել է **1,120.8 մլրդ. ՀՀ դրամ**, մինչդեռ փաստացի ծախսվել է **630.9 մլն. ՀՀ դրամ**, ինչի արդյունքում գրանցվել է **56.3% կատարողական**: Պլանային բյուջեն աճել է մոտ 5.5%-ով՝ 2024-ի համեմատ: Ցածր կատարողականը պայմանավորված է կրթաթոշակ ստացող ուսանողների թվով, ինչպես նաև արտերկրում սովորող ուսանողների կրթական ծախսերի երրորդ եռամսյակի հաշիվները ուղարկվել են սեպտեմբեր ամսին, ուստի փոխանցումները կատարվել են հոկտեմբերին, ինչպես նաև կանխատեսված և փաստացի փոխարժեքի տարբերությամբ: Էական ազդեցություն է ունեցել կրթաթոշակ ստացող ուսանողների թվի շեղումը պլանային ցուցանիշներից: Տարեկան ճշգրիտ պլանով նախատեսվել է կրթաթոշակ տրամադրել 11,869 ուսանողի, մինչդեռ փաստացի կրթաթոշակ է ստացել 4,940 ուսանող: Այս տարբերությունը հանգեցրել է կրթաթոշակային ֆոնդի զգալի թերակատարության՝ անմիջական ազդեցություն ունենալով ծրագրի ընդհանուր կատարողականի վրա:

12002 – Հետբուհական մասնագիտական կրթության կրթաթոշակներ (բուհեր)

Այս միջոցառման նպատակն է ապահովել հետբուհական կրթություն ստացող ուսանողների սոցիալական աջակցությունը և խթանել մասնագիտական ու գիտական գործունեությունը: **2020–2024 թվականներին այն իրականացվել է կատարողականով (72-99%):** 2020 թվականին միջոցառման պլանային բյուջեն կազմել է **390.8 մլն. ՀՀ դրամ**, իսկ փաստացի օգտագործումը՝ **284.2 մլն. ՀՀ դրամ**, ինչի արդյունքում արձանագրվել է **72.7% կատարողական**: Շեղումը հիմնականում պայմանավորված է եղել **հետբուհական կրթություն ընդունված ուսանողների թվի պակասով և COVID-19 համավարակով պայմանավորված կազմակերպչական խոչընդոտներով**: 2024 թվականին միջոցառման պլանային բյուջեն կազմել է **520.7 մլն. ՀՀ դրամ**, իսկ փաստացի ծախսը՝ **515.0 մլն. ՀՀ դրամ**, ապահովելով **98.9% կատարողական**: 2025 թվականի 9 ամիսների ընթացքում պլանային բյուջեն կազմել է **532.2 մլն. ՀՀ դրամ**, ճշտված բյուջեն՝ **532,2 մլրդ. ՀՀ դրամ**, փաստացի ծախսվել է **334.7 մլն. դրամ**, ապահովելով **62.9% կատարողական**: **Պլանային բյուջեն աճել է մոտ 2.2%-ով՝ 2024 թվականի նկատմամբ**: 2025 թվականի 9 ամիսների ընթացքում արձանագրված ցածր կատարողականը (62.3%) պայմանավորված է մի շարք գործոններով:

Առաջին հերթին, էական ազդեցություն է ունեցել կրթաթոշակ ստացող ուսանողների թվի շեղումը պլանային ցուցանիշներից: Տարեկան ճշտված պլանով նախատեսվել է կրթաթոշակ տրամադրել 11,869 ուսանողի, մինչդեռ փաստացի կրթաթոշակ է ստացել 4,940 ուսանող: Այս տարբերությունը հանգեցրել է կրթաթոշակային ֆոնդի զգալի թերակատարության՝ անմիջական ազդեցություն ունենալով ծրագրի ընդհանուր կատարողականի վրա:

Երկրորդ կարևոր գործոնը վերաբերում է արտերկրում սովորող ուսանողների կրթության ֆինանսավորմանը: Երրորդ եռամսյակի վճարային հաշիվները ներկայացվել են միայն սեպտեմբեր ամսին, ինչի հետևանքով փոխանցումները կատարվել են արդեն հոկտեմբերին: Քանի որ վերլուծությունը կատարվել է առաջին 9 ամիսների տվյալների հիման վրա, այդ փոխանցումները չեն արտացոլվել հաշվետու ժամանակահատվածում, ինչն արհեստականորեն նվազեցրել է կատարողականի ցուցանիշը:

Բացի այդ, ազդեցություն է ունեցել նաև կանխատեսված և փաստացի փոխարժեքների տարբերությունը: Քանի որ արտերկրում ուսման ծախսերը իրականացվում են արտարժույթով, փոխարժեքի տատանումները հանգեցրել են պլանավորված և փաստացի դրամային արտահայտությունների տարբերությանը:

12003 – Ասպիրանտական և դոկտորանտական կրթաթոշակներ

Այս միջոցառումը նպատակ ունի խթանել գիտական կադրերի պատրաստումը, գիտահետազոտական գործունեության զարգացումը և բարձրագույն կրթության համակարգի գիտական ներուժի վերարտադրությունը: **2020–2024 թվականներին այն իրականացվել է կայուն և բարձր կատարողականով (91–99%):** 2020 թվականին միջոցառման պլանային բյուջեն կազմել է **35.0 մլն. ՀՀ դրամ**, իսկ փաստացի ծախսը՝ **34.7 մլն. ՀՀ դրամ**, ապահովելով **99.0% կատարողական**: 2024 թվականին պլանային բյուջեն կազմել է **89.0 մլն. դրամ**, իսկ փաստացի օգտագործումը՝ **88.2. մլն ՀՀ դրամ**, ապահովելով **99.1% կատարողական**: 2025 թվականի 9 ամիսների ընթացքում պլանային բյուջեն կազմել է **89.0 մլն. ՀՀ դրամ**, մինչդեռ փաստացի օգտագործվել է **31.1 մլն. ՀՀ դրամ**, ինչի արդյունքում գրանցվել է **34.9% կատարողական**: 2025 թվականի հաշվետու ժամանակահատվածում արձանագրված շեղումը պայմանավորված է կրթաթոշակ ստացող ուսանողների փաստացի թվով: Տարեկան ճշտված պլանով նախատեսվել էր կրթաթոշակ տրամադրել 124 ուսանողի, մինչդեռ փաստացի կրթաթոշակ է ստացել 87 ուսանող:

12005 – Հետբուհական կրթության գծով նպաստներ բուհերում

2020–2024 թվականներին այն իրականացվել է բարձր և կայուն կատարողականով (89–95%): 2020 թվականին պլանային բյուջեն կազմել է **653.1 մլն. ՀՀ դրամ**, իսկ փաստացի՝ **581.8 մլն. ՀՀ դրամ**, ապահովելով **89.1% կատարողական**: Շեղումը պայմանավորված է եղել շահառուների փաստացի թվի նվազումով: 2024 թվականին պլանային բյուջեն կազմել է **502.8 մլն. ՀՀ դրամ**, իսկ փաստացի օգտագործումը՝ **478.6 մլն. ՀՀ դրամ**, ապահովելով **95.2% կատարողական**: **2025 թվական (9 ամիս)** 2025 թվականի 9 ամիսների ընթացքում պլանային բյուջեն կազմել է **499.2 մլն. ՀՀ դրամ**, իսկ փաստացի՝ **305.3 մլն. ՀՀ դրամ**, ապահովելով **61.1% կատարողական**: Տարբերությունը պայմանավորված է ուսանողների փաստացի թվաքանակի շեղմամբ պլանային ցուցանիշներից:

Մասնավորապես, ուսանողական նպաստներ ստացողների միջին տարեկան թիվը ճշտված պլանով նախատեսվել է **1,006 մարդ**, մինչդեռ փաստացի կազմել է **812 մարդ**: Շահառուների թվի նվազումը հանգեցրել է համապատասխան բյուջետային հոդվածի թերակատարության, քանի որ ֆինանսավորման ծավալը անմիջականորեն կախված է նպաստ ստացողների քանակից: Այսինքն՝ ծախսերի նվազումը պայմանավորված է շահառուների թվի պակասով:

Միևնույն ժամանակ, «Գիտելիքների տնտեսության և գիտության զարգացման արդի պահանջներին համապատասխան բարձրագույն և հետբուհական մասնագիտական

որակավորում ունեցող մասնագետների պատրաստում (մագիստրոս)» միջոցառման շրջանակում ճշտված պլանով նախատեսված **82 մարդու** ցուցանիշը փաստացի ամբողջությամբ ապահովվել է՝ կազմելով նույնպես **82 մարդ**։ Սա ցույց է տալիս, որ տվյալ միջոցառման մասով իրականացումը եղել է ամբողջական, և շեղումներ չեն արձանագրվել։ **Պլանային բյուջեն նվազել է մոտ 0.7%-ով՝ 2024-ի համեմատ։**

12006 – Նպաստներ գիտակրթական հաստատություններում

Այս միջոցառման նպատակն է ապահովել գիտահետազոտական և գիտակրթական հաստատություններում ուսանողների սոցիալական պաշտպանությունը և նպաստել գիտական գործունեության շարունակականությանը։ **2020–2024 թվականներին այն իրականացվել է 74–95% կատարողականով։ 2025 թվականին, միջոցառման կատարողականը կազմել է 31.7%։** 2020 թվականին պլանային բյուջեն կազմել է **47.9 մլն. ՀՀ դրամ**, իսկ փաստացի օգտագործվել՝ **35.5 մլն. ՀՀ դրամ**, ապահովելով **74.1% կատարողական**։ Շեղումը պայմանավորված է եղել շահառուների թվի նվազումով և համավարակային սահմանափակումներով։ 2024 թվականին պլանային բյուջեն կազմել է **35.6 մլն. ՀՀ դրամ**, իսկ փաստացի օգտագործումը՝ **33.9 մլն. ՀՀ դրամ**, ապահովելով **95.3% կատարողական**։ 2025 թվականի 9 ամիսների ընթացքում պլանային բյուջեն կազմել է **35.6 մլն. ՀՀ դրամ**, մինչդեռ փաստացի ծախսվել է **11.3 մլն. ՀՀ դրամ**, ապահովելով ընդամենը **31.7% կատարողական**։ Միևնույն ժամանակ, արձանագրված շեղումը պայմանավորված է նպաստ ստացող ուսանողների փաստացի թվով։ Ճշտված պլանով նախատեսվել էր **358 ուսանող**, մինչդեռ փաստացի շահառուների միջին տարեկան թիվը կազմել է **350 մարդ**, քանի որ ֆինանսավորման չափը հաշվարկվում է շահառուների թվի հիման վրա։

2024-2025թթ.⁴² ուսումնական տարում Հայաստանի բուհերում ուսանողների ընդհանուր թիվը կազմել է շուրջ 80,000, որոնցից մոտ 83%-ը սովորել է պետական բուհերում, այսինքն՝ մոտ 66,5 հազար ուսանող։ Բարձրագույն կրթության կրթաթոշակ ստացել է 11,884 ուսանող, ինչը կազմում է ուսանողների ընդհանուր թվի մոտ 14.8 %-ը։ Բարձրագույն կրթություն ստացողների միջին կրթաթոշակի չափը կազմել է **7,447 ՀՀ դրամ**։ Հետբուհական կրթության մակարդակում **կրթաթոշակ ստացել է 827 ուսանող, ինչը կազմում է հետբուհական ծրագրերում սովորողների մոտ 10%-ը**, նրանց միջին կրթաթոշակի չափը կազմել է **61,446 ՀՀ դրամ**։ Բացի այդ, բարձրագույն և հետբուհական կրթության նպաստ ստացել են համապատասխանաբար 11,732 ուսանող բուհերում և 1,168 ուսանող

⁴²ՀՀ վիճակագրական կոմիտե, «Կրթության վիճակագրություն, 2024/2025 ուսումնական տարի», Երևան, 2024։
https://armstat.am/file/article/soc_sit_2024_03.pdf

ասպիրանտուրայում: ԲՏՃՄ ուղղություններով բարձրագույն մասնագիտական կրթությունը խրախուսելու նպատակով, պետության կողմից մասնագիտական մանկավարժության ծրագրով սովորողների խրախուսման ծրագիր է ներդրել՝ ամսական 70,000 ՀՀ դրամ կրթաթոշակով, որի արդյունքում 2024-2025 ուսումնական տարում բուհեր է ընդունվել նախորդ ուսումնական տարում ընդունվածներից շուրջ 20%-ով ավելի դիմորդ: Այս քաղաքականությունը ՀՀ կառավարության 2024թ. սեպտեմբերի 5-ի № 1402-Ն որոշմամբ տարածվել է նաև ագրարային ոլորտի մասնագիտությունների վրա: